# Ազգ
Azg

13-19 ՓԵՏՐՎԱՐ 2026 ՈՒՐԲԱԹ 005(5873)

ISSN: 1829-1651

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ


## «Քրիստոնեական» քարոզչական նվերներ Վատիկանին՝ Բաքվից

**«Ուրախալի է, որ Հռոմի Լեոն XIV քահանայապետին հասու է դարձել 2024-ին Բեռլինում Ադրբեջանի դեսպանության հրատարակած «Քրիստոնեական կյանքն Ադրբեջանում» անգլերեն, գերմաներեն ժողովածուն: Այն ներկայացվել է Ալլահշուքյուր Փաշազադեի գլխավորած Ադրբեջանի միջկրոնական պատվիրակության՝ Վատիկան այցի շրջանակներում: Ժողովածուն ամփոփում է Ադրբեջանի հարուստ քրիստոնեական ժառանգությունը»: Սա Բեռլինում դեսպան Աղաեւի փետրվարի 10-ին X-ում տարածած տեղեկատվությունն է՝ կից լուսանկարներով: Նկատելի է այսպես կոչված ալբանաուդիական քրիստոնեական համայնքի ղեկավար Ռոբերտ Մոբիլի մեծամիտ հայացքը՝ Հռոմի պապի հետ «սուրբ կույս Մարիամ ալբանաուդիական եկեղեցու» պատկերով սփռոցը պահելիս: Ադրբեջանում կա՞ այդպիսի եկեղեցի, թե՞ հայկական է, որ տրվել է այդ համայնքին: «Քրիստոնեական կյանքն Ադրբեջանում» գրքին կանդրադառնանք:**

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ, Գերմանիա

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## ԱՄՆ-ը թափով մխրճվում է մեր տարածքում ու տարածաշրջանում

Երկօրյա այցից հետո Երեւանից Բաքու մեկնելուց առաջ տված ճեպազրույցում, բարձր գնահատելով իր երկրի կողմից Հայաստանին տրամադրվելիք՝ այսպես կոչված «ներդրումային» ծրագիրը, որը, իր խոսքերով, Մ. Նահանգներում ստեղծելու է բազմահազար աշխատատեղեր, ԱՄՆ փոխնախագահ **Ջեյ Դի Վենսը** ամերիկյան ընթացիկ արտահայտությամբ վստահեցրեց, որ երկու երկրների միջեւ ստեղծվում է win-win situation, այսինքն՝ երկուստեք շահեկան իրավիճակ. շահում է Հայաստանը, շահում է Մ. Նահանգները:

Առայժմ մեկ կողմ՝ մասնագիտական շրջանակներին վերապահելով ստեղծված կացության ավելի խորը քննության պարտականությունը, որի արդյունքում կիմանանք, թե խնդրո առարկա գործարքներից իրականում ի՞նչ է շահելու մեր երկիրը, ուրիշ ո՞վ եւ ովքե՞ր են շահելու դրանցից, իսկ, մյուս կողմից, ի՞նչ են կորցնելու տարածաշրջանի մյուս երկրները՝ գլխավորաբար Ռուսաստանը, Իրանը, նույնիսկ՝ ոչ տարածաշրջանային Չինաստանը, Ֆրանսիան եւ այլք, Վենսի արտահայտություններն ու պահվածքը իմ վրա թողեցին ընտրարշավային տպավորություն, նկատի ունենալով, որ ամերիկյան նախագահական գալիք ընտրություններում Վենսը համարվում է հանրապետականների գլխավոր թեկնածուն:

Միայն այն փաստը, որ վերջին պահին Վենսը ջնջեց թուիթերյան իր գրառումը՝ տիկնոջ հետ Ցեղասպանության հուշահամալիր այցելելու եւ Հավերժական կրակի առջեւ ծաղկեփնջեր խոնարհելու վերաբերյալ, ցույց տվեց նրա ծայրահեղ զգուշավորությունը, անգամ թուրքական լոբբիից վախենալու անբացատրելի վարմունքը. կարծեք **Փաշինյա՛նը** վարակած լիներ նրան... Դա հրաշալի առիթ տվեց **Նենսի Պելոսիին**՝ Կոնգրեսի ներկայացուցիչների պալատի նախկին խոսնակին, որ հանդիմանի ու հիշեցնի նրան, որ Վաշինգտոնը, Կոնգրեսով ու նախագահով հանդերձ 2019-ին պաշտոնապես ճանաչել ու դատապարտել է Մեծ Եղեռնը: Այդ միջադեպով, կարծում եմ, փաստորեն սեղմվեց start-ի կոճակը ամերիկյան նախընտրական պայքարի:

Նույն՝ ցեղասպանության հարցով ավելի քան նկատելի եղավ նաեւ Վենսի վարմունքի խիստ համահունչ լինելը նիկոլական իշխանության մոտեցմանը: Էրդողանի փափո՜ւկ սիրտը չվշտացնելու, նրան հուսախաբ չանելու մտահոգությամբ, Ծիծեռնակաբերդ այցելող բարձրաստիճան զույգին չուղեկցեց պետական համապատասխան որեւէ պաշտոնյա: Ավելին՝ ի տարբերություն տարիներից ի վեր կիրառվող արարողակարգի, փոխնախագահին զլացվեց հարակից՝ Հիշատակի պուրակում անվանական եղեւնի տնկելու պատեհությունը, ի դիմաց, անշուշտ, առաջիկա խորհրդարանական ընտրություններում Նիկոլի վերընտրությանը փողով-թմբուկով աջակցելու Էրդողանի հայտարարության:

Ասենք՝ նույնը արեց նաեւ Ջեյ-Դի-Վենսը, որ հրաժեշտի ճեպազրույցում աջակցություն հայտնեց Փաշինյանի թեկնածությանը, խախտելով նման հարցերում միջամուխ չլինելու ամերիկյան սկզբունքը:

Այս բոլորը եւս մեկ անգամ ցույց են տալիս, թե ո՞վ, ովքե՞ր են Փաշինյանին բերել իշխանության, ինչո՞ւ են բերել եւ ինչո՞ւ են ցանկանում նրան պահել աթոռին: Իսկապես դեռ շատ գործ կա անելիք: Բացի «Թրամփյան միջանցքի» մեծամասշտաբ ծրագրից, որը գլխավոր օրակարգի հարցն էր Վենսի այցելության ու բանակցությունների, տակավին կան օրակարգային հայտնի ու դեռեւս անհայտ այլ հարցեր, սկսած Մեծամորի ատոմակայանը ամերիկյան կիսամիջոցներով փոխարինելու, այդպիսով «Ռուսատոմը» Հայաստանից վռնդելու, երկաթուղային ցանցը զարգացնելու անվան տակ՝ կոնցեսիոն հիմունքներով գործող ռուսական ընկերությանը տրված մենոպոլիան վերացնելու, Իրանի հետ մեր երկրի էներգետիկ համագործական հարաբերությունները խզելու, եւ Մ. Նահանգների համար ամենակարեւորը՝ Սյունիքում գործող պղնձամոլիբդենային եւ հանքարդյունաբերական մյուս ճյուղերի, այդ թվում՝ ուրանի եւ այլ հանածոների հայ-ամերիկյան «համատեղ» շահագործման իրավունքի կորզումը:

Այո, Մ. Նահանգները, թրամփյան հայտնի նպատակասլացությամբ մխրճվում, խորանում է մեր երկրում, միաժամանակ այստեղից վանելով մեր ավանդական բարեկամներին ու գործակիցներին, գլխավորաբար Ռուսաստանին եւ Իրանին, հեռու պահելով նաեւ Չինաստանին, ի վերջո հասնելու համար գերնպատակին՝ ռուսական 102-րդ ռազմաբազայի վերացմանը:

Վերջում կուզենայի հարց տալ՝ հիմք ընդունելով Վենսի այցի նախօրեին Երեւանում վայրէջք կատարած ամերիկյան ռազմական բեռնափոխադրող օդանավերով բերված անօդաչու սարքերի պարագան: Ասվում է, որ դրանք հետախուզական են եւ ո՛չ մարտական: Ամոթ չլինի հարցնելը, թե դրանցով ո՞ւմ են հետախուզելու, անշուշտ եթե թողնվի, որ մեր զինուժը օգտագործի դրանք:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## Շեղված օրակարգեր

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Խորհրդարանում երկու օր է քննարկում էին **Հակոբ Մովսեսին** եւ նրա տեսակետները՝ հնչած լրատվամիջոցի եթերում: Նախագիծը բերել էր «Հայաստան» խմբակցությունը եւ առաջարկում էր Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի անդամ Հակոբ Մովսեսի լիազորությունների դադարեցումը, քանի որ վերջինս իր հարցազրույցներում քաղաքական չեզոքություն չի դրսեւորել, քաղաքական գնահատականներ է հնչեցրել ՀՅԴ հասցեին՝ կուսակցական չլինելով դրանցում, ինչի իրավունքն ի պաշտոնե, որպես անկախ պետական մարմնի անդամ, չունի:

Ասենք, որ այս հարցը վերածվեց ՀՅԴ-ՔՊ առճակատման՝ մինչ այս էլ հայտնի այն տեսակետների հակադրությամբ, որոնք միշտ էլ խորհրդարանում եւ նրանից դուրս արտահայտվել են, ուղղակի այս անգամ պատմական եւ ներկա էքսկուրսները կատարվեցին բարձր մակարդակով, ի դեմս Հակոբ Մովսեսի եւ ՀՅԴ ներկայացուցիչների: Հակոբ Մովսեսն ի գիտություն ընդունեց կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ներկայացուցչի (հարակից զեկուցող) եզրակացությունը՝ Մովսեսի գնահատականների ինչ-որ հատվածում խախտում արձանագրվել է՝ մնալով, սակայն, իր տեսակետներին հավատարիմ: Իսկ ՔՊ-ն , բնականաբար, կանգնեց Հակոբ Մովսեսի կողքին, ու նա հազիվ թե զրկվի պաշտոնից փակ գաղտնի քվեարկությամբ:

Ինձ այս բոլորում այլ բան է հետաքրքրում: ՀՅԴ-ին, որ նախագծի գեներացման հեղինակն էր, երկու բան էր հաջողվել՝ ՀՅԴ-ի մասին երկօրյա խոսակցություն-քննարկում ԱԺ-ում, եւ, կամա թե ակամա, մեր հայացքների շեղում ԱՄՆ փոխնախագահ **Ջեյ Դի Վենսի** այցելությունից Հայաստան, այդ առթիվ հրապարակված համագործակցության հայտնի դարձած կետերի մասին խորհրդարանում լայնորեն խոսելու պատեհությունից, Հայաստանի համար դրանց նշանակությունը գնահատելուց:

Չգիտեմ ինչ ասել, ինչ անուն տալ այս բոլորին: Իմաստ չեմ գտնում անգամ այդ երկու օրվա լայն լուսաբանման մեջ (չնայած տարողունակ ելույթներին), մենք այս օրերին այլ օրակարգ պիտի ունենայինք: Մի բանի հետ համաձայն եմ՝ ՀՌՀ անկախ մարմնի անդամն, իրոք, քաղաքական չեզոքությունը պետք է պահի, միգուցե այս քննարկումը կնպաստի դրան այսուհետ:

Մինչդեռ արժեր լսել ընդդիմության լայն արձագանքը հենց խորհրդարանում, երբ ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսի՝ Երեւան այցի ընթացքում բարձրաձայնված հայտարարությամբ հայտնի դարձավ ՀՀ եւ ԱՄՆ կառավարությունների միջեւ խաղաղ նպատակներով միջուկային էներգիայի օգտագործման վերաբերյալ համագործակցության համաձայնագրի բանակցությունների ավարտի, ինը միլիարդ դոլարի ամերիկյան փոքր մոդուլային ռեակտորների արտահանման մտադրության մասին Հայաստան՝ սկզբում 5 միլիարդ դոլարի սարքավորումներ, իսկ մնացած 4 միլիարդ դոլարը կկազմեն վառելիքի մատակարարման և ռեակտորների սպասարկման պայմանագրերը:

⇨2

## Բաքվում ցմահ դատապարտված... խաղաղություն

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա

***Գերմանալեզու մամուլը (մյուսների նման) մեկ տարի շարունակ զրկված էր Բաքվում Արցախի նախկին ղեկավարության դատավարությունը լուսաբանելուց, բայց նախորդ շաբաթ, նաեւ երեկ, նույնիսկ հակիրճ տեղեկատվությամբ իր վերաբերմունքն արտահայտեց: Ո՞վ է հավատում ավտորիտար պետության ծանր, շինծու մեղադրանքին: Խաղաղություն հաստատելու գործընթաց եւ ցմահ դատապարտում. ի՞նչ է սա, եթե ոչ ապագա բանակցություններում խաղաղության դիկտատի դիմաց պարտված հարեւանից ծանրակշիռ պահանջ: Ստորեւ մեր ամփոփումը՝ գերմանական, շվեյցարական, ավստրիական ԶԼՄ-ներին հղումով:***

«Ադրբեջանի դատարանը դատապարտել է ԼՂ-ի նախկին ղեկավարներին», փետրվարի 5-ին ծանուցեց գերմանական «**Դի ցայթը**» (DIE ZEIT)՝ իր անվան կողքին ավելացնելով մյուս երկու աղբյուրները՝ dpa, ale: Վերջինը լրագրող, խմբագիր **Ալեքսանդր Այդլինն** է (Alexander Eydlin), որ մասնագիտացած է Ռուսաստանի, Ուկրաինայի հարցերով: Բնականաբար տեղեկատվությունը մատուցելիս «Ցայթը» չի նշում, թե նյութը պատրաստած հեղինակային խմբից որեւէ մեկը ներկա է եղել դատավարությանը, ուստի հայտնում է՝ «ըստ ադրբեջանական պետական լրատվական գործակալությունների՝ ամբաստանյալները մեղադրվել են մի շարք՝ մարդկության դեմ, ռազմական, ցեղասպանության եւ ահաբեկչության, նաեւ այլ հանցագործությունների մեջ»:

«Ադրբեջանի ռազմական դատարանը ազատազրկման է դատապարտել ԼՂ-ի շրջանի ղեկավարներին:

⇨3

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Իրանագետ

# Իրան-ԱՄՆ բանակցություններ Մասկատում. հայտարարություններից անդին

ԻԻՀ ԱԳ նախարար **Աբբաս Արաղչիի** եւ ԱՄՆ նախագահի մերձավորարեւելյան հարցերով բանագնաց **Սթիվ Վիթքոֆի`** Օմանի մայրաքաղաք Մասկատում փետրվարի 6-ին տեղի ունեցած միջնորդավորված հանդիպման արդյունքների վերաբերյալ հրապարակված տեղեկատվությունը խիստ սահմանափակ է եւ բավարար չէ հստակ գնահատական ձեւակերպելու համար: Վաշինգտոնը մինչ այժմ բովանդակային առումով էական հայտարարությամբ հանդես չի եկել:

Անորոշության այս պայմաններում միակ նկատելի արձագանքը նախագահ **Դոնալդ Թրամփի`** դեռեւս յոթ ամիս առաջ սոցիալական ցանցում արված գրառման վերահրապարակումն էր` անմիջապես բանակցությունների ավարտից հետո: X հարթակում տեղադրված հայտարարությունը հետեւյալ բովանդակությունն ուներ.

***«ԱՄՆ-ը հնարավորություն ունի անելու այն, ինչ պետք է արվեր տասնամյակներ առաջ: Մի՛ եղեք թույլ: Մի՛ եղեք հիմար: Մի՛ եղեք խուճապահար»:***

Իսկ արտգործնախարար Արաղչին բառացիորեն ասել է. «Ուրբաթ օրը Մասկատում տեղի ունեցած բանակցությունները միայն միջուկային հարցի շուրջ էին. մենք բազմիցս հայտարարել էինք, որ կբանակցենք միայն այս հարցի շուրջ, եւ ահա թե ինչ եղավ»: Արաղչին հավելել է. «Եթե շարունակվի, ապագայում էլ այդպես կլինի. որոշում կկայացվի բանակցությունները շարունակելու վերաբերյալ»:



Իրանի արտգործնախարարի խոսքերից կարելի է միայն եզրակացնել, որ բանակցությունները հիմնականում սահմանափակվել են «տեսակետների փոխանցմամբ», եւ որոշվել է «մայրաքաղաքներում խորհրդակցություններ անցկացնել ու որոշել գործընթացի հետագա ընթացքը»:

Այս ձեւակերպումները կարող են վկայել տարաձայնությունների պահպանման եւ բովանդակային քննարկումների բացակայության մասին: Արաղչին նաեւ նշել է «համաձայնեցված շրջանակ մշակելու եւ հաջորդ նիստերում քննարկվելիք թեմաները հստակեցնելու անհրաժեշտությունը», ինչը ցույց է տալիս Իրանի եւ ԱՄՆ-ի մոտեցումների տարբերությունը:

Դժվար է պատկերացնել, որ նախագահ Թրամփը կարող էր ակնկալել երկարատեւ բանակցությունների արդյունքում բազմադետսալ համաձայնագրի ստորագրում` 159 էջանոց միջուկային համաձայնագրի օրինակով: Օմանի արտգործնախարարի հայտարարությունը, ըստ որի բանակցությունները նպատակ ունեին «հստակեցնել երկու կողմերի տեսակետներն ու այն ոլորտները, որտեղ հնարավոր է առաջընթաց», եւս վկայում է, որ գործընթացը եղել է նախնական փուլում:

Արաղչիի` «Ալ Ջազիրա»-ին տված հարցազրույցում հնչեցրած հայտարարությունները` Իրանի հարստացումը որպես «Իրանի անքակտելի իրավունք» եւ հրթիռային ծրագրի շուրջ բանակցություններից հրաժարվելը, արտահայտում են իրանական կողմի անբեկանելի դիրքորոշումը: Այդ առումով Թեհրանի դիրքորոշումը հստակ է: Մնում է պարզել` արդյոք Վաշինգտոնը կընդունի՞ այդ պայմանները:

Այլ կերպ ասած` իրավիճակը կրկին հիշեցնում է զրոյական արդյունքի տրամաբանություն, ինչպես անցած գարնանը, երբ մեկ կողմի շահը մյուսի պարտությունն էր:

Թրամփի մինչ այժմ հնչեցրած արձագանքը բավականին ընդհանուր է: Հաշվի առնելով նրա քաղաքական ոճը` կարելի է ենթադրել, որ ավելի հստակ դիրքորոշումը դեռ կհնչի: Սակայն արդեն այժմ ակնհայտ է, որ այս փուլում բանակցությունները ընթանում են առավել բարդ պայմաններում, քան նախորդ անգամ:

### Ռազմական ֆոնը

Մասկատի բանակցությունները տեղի ունեցան 12-օրյա պատերազմի ստվերի ներքո: Տարածաշրջանում ամերիկյան ռազմական ներկայության ակտիվացումը եւ «ռազմական սպառնալիքի» գործոնի ընդգծումը լրացուցիչ ճնշում էին ստեղծում բանակցային միջավայրում:

«Ալ Ջազիրա»-ի հունվարի 25-ի հաղորդմամբ` շուրջ 40-50 հազար ամերիկացի զինծառայող տեղակայված է առնվազն 19 կետում` ավելի քան 12 երկրներում: Ցանցը ներառում է ութ մշտական բազա եւ 11 օպերատիվ կենտրոն:

Միաժամանակ հաղորդումներ էին շրջանառվում ինչպես որոշ բազաներից ուժերի մասնակի դուրսբերման, այնպես էլ տարածաշրջան լրացուցիչ ուժերի եւ տեխնիկայի տեղափոխման մասին` Իրանի շուրջ հռետորական եւ ռազմական լարվածության աճի պայմաններում:

12-օրյա պատերազմի ընթացքում ԱՄՆ-ի կողմից Իրանի երեք միջուկային կենտրոնների թիրախավորումը նոր մակարդակի է բարձրացրել դիմակայությունը:

Իրանի ռազմաքաղաքական ղեկավարությունը բազմիցս հայտարարել է, որ որեւէ հարձակում կհանդիպի «վճռական պատասխանի» եւ կարող է հանգեցնել լայնամասշտաբ բախման:

### ԱՄՆ ռազմական ներկայությունը Պարսից ծոցի երկրներում

Քաթարում տեղակայված «Ալ Ուդեյդ» ավիաբազան Մերձավոր Արեւելքում ԱՄՆ-ի ամենախոշոր ռազմական հենակետն է` շուրջ 10 հազար զինծառայողով եւ CENTCOM-ի առաջատար շտաբով:

Քուվեյթում գործում են ԱՄՆ-ի մի շարք ռազմաբազաներ, Բահրեյնում տեղակայված է Հինգերորդ նավատորմի շտաբը` մոտ 9 հազար անձնակազմով: Սաուդյան Արաբիայում, ԱՄԷ-ում, Օմանում, Իրաքում, Հորդանանում, Սիրիայում եւ Թուրքիայում եւս պահպանվում է տարբեր ծավալի ռազմական ներկայություն, այդ թվում` ռազմավարական նշանակության ավիաբազաներ եւ նավահանգիստներ:

Հատկանշական է հատկապես Թուրքիայում գտնվող «Ինջիրլիք» ավիաբազան, որտեղ, ըստ բաց աղբյուրների, պահվում են նաեւ ամերիկյան միջուկային մարտագլխիկներ:

### Եզրակացություն

Իրանի շուրջ ԱՄՆ ռազմական ուժերի խիտ եւ ընդգրկուն ներկայությունը չէր կարող չազդել Իրան-ԱՄՆ բանակցությունների մթնոլորտի եւ բովանդակության վրա: Թերեւս հենց այդ ռազմաքաղաքական ֆոնն է առավել խոսուն, քան պաշտոնական հայտարարությունների լռությունը:

Մասկատի հանդիպման արդյունքների մասին իրական պատկերացումը պետք է փնտրել ոչ միայն հրապարակային հայտարարություններում, այլեւ տարածաշրջանում ուժերի տեղաբաշխման եւ զսպման հաշվարկներում:

# Շեղված օրակարգեր

⇨1 Մոդուլային ատոմակայանների վերաբերյալ, որին արդեն, բացասական արձագանք կա ռուսական կողմից, ՌԴ ԱԳՆ ներկայացուցիչ **Մարիա Զախարովան** է արձագանքել` դրանք անվանելով չթեստավորված, մենք փորձում էինք հարց ուղղել եւ պատասխաններ ստանալ խորհրդարանում, բայց այդ հարցից խուսափում էին բոլորը: ՀՅԴ-ից **Արթուր Խաչատրյանն** ասաց` մասնագետ չի, **Ալեն Սիմոնյանը**, որին այդ մասին հարցնում էինք երեքշաբթի` հղում արեց վարչապետին, թե ԱԺ-կառավարություն հարցուպատասխանի ժամանակ այդ հարցն էլ կշոշափվի-կասի: Չշոշափվեց, ավելին ` Հանրային հեռուստատեսությանը տված **Նիկոլ Փաշինյանի** հարցազրույցում եւս անորոշ մնաց ատոմային էներգետիկայի ոլորտում համագործակցության թեման: Էկոնոմիկայի նախարար **Գեւորգ Պապոյանը** հարցն անգամ չուզեց մինչեւ վերջ լսել, թե բա` հին եք , ամեն բան փոխվել է, էլ հին ժամանակները չեն, երբ խոսում էիք, թե ջերմուկով կարելի է երկիրը պահել: Ու փախավ-գնաց: Չհասցրի ասեմ` թե ո՞վ է հինը, ժամանակին ՀՀՇ-ական այդ եւ բազմաթիվ այլ թեզեր հենց ես էի քննադատում, իսկ ինքն էլ հիմա էկոնոմիկան զարգացնելու փոխարեն` Գյումրու շուկան նորոգելուց ու գյումրեցիներին հանձնելուց է խոսում, կամ երկիր դրսի մեգաաստղերին բերելուց:

Մինչդեռ անգամ Փաշինյանի նախկին խմբակցության ղեկավար **Էդմոն Մարուքյանն** է կասկածում, որ մոդուլային ատոմակայանի կառուցման սոուսի տակ Մեծամորի ատոմակայանն է փակվելու սոսկ: Եւ առհասարակ`11 մլն դոլարի հետախուզական դրոնային տեխնոլոգիաների վաճառքից սկսած մինչեւ միջուկային համագործակցություն` արժեր մանրամասն քննարկել, մինչեւ դրանց իրագործումն սկսելը:

Առհասարակ` Վենսի այցի շուրջ քաղաքական աժիոտաժը թույլ չի տալիս առավել հանդարտ հայացքով վերլուծել տնտեսական, հայ-ամերիկյան ծրագրի անվտանգային բաղադրիչներից յուրաքանչյուրը: Մինչդեռ չքննարկումն ու անտեսումը հենց այդ ձեւաչափերն են. որ միշտ իշխանության օգտին են աշխատել, իսկ հանդարտ վերլուծությունները, Բաքվում Վենսի ստորագրած խարտիայի եւ մտադրությունների բարձրաձայնումների մանրամասն ու չքաղաքականացված վերլուծությունները կկարողանային վեր հանել ներկա ծրագրերի թաքնված խութերը, որ միգուցե իշխանականների համար էլ անտեսանելի են եւ հուշումների դեր կստանձնեին:

**Սամվել Կարապետյանի** ու նրա կողմնակիցների հիմնադրած «Ուժեղ Հայաստան» կուսակցության պաշտոնական շնորհանդեսին նախորդ օրը վարչապետի թեկնածու որպես անվանվել է հենց Սամվել Կարապետյանը: Նրա երկքաղաքացի լինելը Հայաստանի օրենսդրությամբ դա չի թույլատրում իհարկե, ու տեղեկություններ կային, որ **Նարե՛կ Կարապետյանն** է լինելու վարչապետի թեկնածու, ու ոչ թե ընտանիքից դուրս ուրիշ մեկը: Բայց երեւում է ` մենք իզուր ենք օրենսդրությունը հիշում, այս նորաստեղծ կուսակցության ղեկավարը խոստանում է ընտրություններում հաղթելու դեպքում ընտրություններից քան օր անց ԱԺ-ում փոխել Սահմանադրության 148-րդ կետը եւ հանգիստ վարչապետ դառնալ: Դե` այդ դեպքում այս նոր կուսակցությունում կարող էին մի ուրիշին վարչապետի թեկնածու առաջադրել, ոչ Կարապետյան ընտանիքից, մեկ է, որ հաղթեն` Սահմանադրության կետ են փոխելու, ու Սամվել Կարապետյանը դառնա վարչապետ: Բա էլ Սահմանադրության պահանջ խախտելը ո՞րն է:

Խնդիրն այստեղ հոգեբանական է: Այն, որ երկիրը բոլորինն է, բայց մի ուժ ընտանիքի անդամների կերպարներով է հանդես գալիս, այլապես օրենսդրությանն անսալով վարչապետի թեկնածու այլ մեկին կառաջադրեր, սրա բացասական ազդեցության մասին հանրության վրա երեւի ներընտանեկան խորհուրդը չի մտածել: Այսինքն` ինչպես Հայաստանում մյուսները չեն ծածկում, որ քաղաքական քարտեզը հավաքած է ինչպես բաժնետիրական ընկերության, որտեղ մի քանի մեծ խաղացող բաժնեմաս ունեն եւ փայատեր են, այնպես էլ Կարապետյան ընտանիքում չեն ծածկում, որ նոր ստեղծված ուժն ընտանեկան է եւ չի պատրաստվում ապագայում ստանձնելիք քաղաքական դերակատարությունից փայ զիջել ընտանիքից դուրս: Դե հա` մենք ո՞վ ենք, հասարակությունն ո՞վ է, Հայաստանն էլ ունեցվածք է, որ կիսում են մի քանիսով, այդ թվում` քաղաքական ուժերի վրա ազդեցություն ունեցող տնտեսական դերակատարներով:

***Հ.Գ.-*** *Հետաքրքրական է, որ Դի Վենսի այցից անմիջապես հետո ռուսական կողմն է հետաքրքրություն ցուցաբերում Հայաստանի հանդեպ`ՌԴ փոխվարչապետ **Ալեքսեյ Օվերչուկը** լրատվամիջոցներին հայտնել է, որ Հայաստանի խնդրանքով Ռուսաստանը առարկայական բանակցություններ է սկսում մեր երկաթուղու երկու հատվածների վերականգնման շուրջ` Երասխի շրջանում` Ադրբեջանի հետ կապող եւ Ախուրյանի շրջանում` Թուրքիայի հետ կապող: Ընդհանուր հաշվարկով մոտ տասնչորս կմ երկաթուղի է վերականգնվելու: Ինչպես ասում են` Հայաստանի շուրջ կենացները քաղցրանում են:*

# Բաքվում ցմահ դատապարտված... խաղաղություն

⇨1 Մարդու իրավունքների պաշտպանները քննադատել են դատավարությունը», գրում է «Ցայթը» առաջին պարբերության մեջ՝ չեզոք տեղեկությունն այնպես մատուցելով, որ ընթերցողը չկասկածի, թե միջազգային ԶԼՄ-ների ներկայությունը մերժած դատավարությունը կարող է արդարացի լինել:

«Ցմահ ազատազրկման դատապարտված հինգ անձանց (պետք է լինի 6- **Ա.Ն. Հ.**) թվում է, ըստ որոշ տեղեկությունների, ԼՂ տարածքի ինքնիշխանությունը պնդող միջազգայնորեն չճանաչված Արցախի Հանրապետության փաստացի վերջին նախագահը: ԼՂ-ն միջազգայնորեն ճանաչված է որպես Ադրբեջանի մաս, բայց անջատված է երկրի հիմնական մասից: Մինչեւ 2023 թվականը գրեթե բացառապես հայերով բնակեցված տարածաշրջանը 1990-ականներից ի վեր կարողանում էր ինքնակառավարվել՝ հայկական բանակի եւ Ռուսաստանի օգնությամբ: 2023 -ի սեպտեմբերին ադրբեջանական զորքերը տարածքը վերցրին իրենց վերահսկողության տակ: Չնայած տարածքի հանդեպ Ադրբեջանի պահանջը պաշտպանված է միջազգային իրավունքով, ավտորիտար պետության գործողությունները միջազգային լուրջ քննադատության արժանացան: Մի քանի օրվա ընթացքում ավելի քան 100,000 հայ վտարվեց ԼՂ-ից, դրանից հետո տարածքը նոր է բնակեցված: Հայաստանը մեղադրեց Ադրբեջանին «էթնիկ զտումների» մեջ: ԼՂ-ի նախկին ղեկավարության դեմ դատավարությունը սկսվեց 2025 -ի հունվարին: Մեղադրանք առաջադրվեց ընդհանուր առմամբ 16 տեղացի քաղաքական գործչի հանդեպ: Առանձին մեղադրանք առաջադրվեց նաեւ Արցախի Հանրապետության կառավարության նախկին ղեկավար **Ռուբեն Վարդանյանի** դեմ: Գերմանական մի շարք իրավապաշտպան կազմակերպություններ քննադատեցին դատավարությունը՝ այն համարելով քաղաքական դրդապատճառներով լի եւ կոչ արեցին Բաքվում ԳԴՀ դեսպանատանը վերահսկել դատավարությունը»: Սա «Ցայթի» հրապարակման փոքր-ինչ կրճատված տարբերակն է: Նկատելի է, որ սույն լրատվությունը Արցախի Հանրապետության փաստացի նախագահ, Արցախի Հանրապետության կառավարության նախկին ղեկավար արտահայտությունները, որ նախկինում գրում էր չակերտների մեջ կամ դրանց հավելում «ինքնակոչ» բառը, նախընտրել է դրանք չկիրառել՝ դրանով նվազագույնը կասկածելի դարձնել նաեւ Բաքվի դատարանի Արցախի ղեկավարությանն ուղղված հիմնական մեղադրանքը՝ ինքնորոշման իրավունքի իրացումը:



*«Ցայթը» հրապարակել է Reuters TV/Reuters-ի լուսանկարը՝ մակագրությամբ՝ միջազգայնորեն չճանաչված Արցախի Հանրապետության վերջին ղեկավարը՝ Արայիկ Հարությունյանը Բաքվի դատարանում:*

Շվեյցարական **«Նոյե ցյուրխեր ցայթունգը»** փետրվարի 6-ին վերնագիր- ենթավերնագրում փոխանցում է իր դիտանկյունը՝ «Խաղաղության գործընթացի միջոցին. Ադրբեջանը բազմաթիվ հայերի ցմահ ազատազրկման է դատապարտում»: «Երկու տարի առաջ Ադրբեջանը նվաճեց Լեռնային Ղարաբաղը (բնագրում՝ Nagorni Karabach- Ա.Ն.Հ.): Այժմ երկիրը կրկին իր ուժն է ցուցադրում Ղարաբաղի հայերի նկատմամբ: Հայաստանն ու Ադրբեջանը մերձենալ են կամենում: Իրականում Ադրբեջանը հաշտություն պիտի հաստատեր իր հարեւանի հետ, սակայն երկրի բռնապետական ղեկավարությունն այժմ հայերին նախազգուշացնող, ազգային միտված նոր ուղենշային օրինակ է ցույց տալիս», գրում է թերթը՝ հուշելով, թե բանակցություններում առավելագույն պահանջներ սահմանելու խաղաթուղթ է: «Ադրբեջանը ցմահ ազատազրկման է դատապարտել հայ ռազմագերիներին: Ուժի ցուցադրություն», ասում է SRF-ի թղթակիցը (Calum MacKenzie): Շվեյցարական ռադիոհեռուսատեսությունը՝ SRF-ը երեկ՝ փետրվարի 12-ին անդրադառնալով Բաքվի դատավարությանը հիշեցնում է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հակամարտության պատմությունը, անդրադառնում խաղաղության փխրուն գործընթացին, որ Մաքքենզիի կարծիքով, խաղաղության թելադրանքի է նման՝ Ադրբեջանը տարբեր պայմաններ է առաջադրում հարաբերությունների կարգավորման համար: «Ղարաբաղի ղեկավարության երկարամյա բանտարկությունները սպասելի էին: Ավելին, **Մաքքենզիի** կարծիքով, Հայաստանի վարչապետ **Փաշինյանը** «հազիվ թե արցունք թափի նրանց ճակատագրի համար»: SRF-ը անդրադառնում է ԼՂ-ի բռնագաղթի հետեւանքով իրենց բուն երկիրը կորցրած արցախցիներին: «Նրանցից շատերը հույս ունեին, որ վարչապետ Փաշինյանը կպահովի իրենց վերադարձը հայրենիք: Այդ հույսերը չարդարացան: «Փոխարենը, նրանք դարձան վարչապետի հռետորաբանության թիրախը, որը նրանց ի թիվս այլ բաների մեղադրեց երախտամոռ լինելու մեջ», կարծիք է հայտնում Մաքքենզին եւ շարունակում՝ իսկ ընդդիմությունը օգտագործում է տեղահանված անձանց՝ հակակառավարական տրամադրություններ հրահրելու համար»: «Ղարաբաղից տեղահանված անձինք տխուր վիճակում են», եզրափակում է SRF-ը թղթակիցը: «Նրանք գնդակ են դարձել քաղաքական երկու ճամբարների խաղում»:

Ավստրիական **ORF**ը փետրվարի 5-ին վերնագրել է «Ադրբեջան. ԼՂ-ի նախկին ղեկավարները դատապարտվել են»: «2023 -ին ԼՂ հայաբնակ անկլավի վերագրավումից հետո, ավտորիտար Ադրբեջանի ռազմական դատարանը մի քանի անջատողական առաջնորդների դատապարտել է երկարատեւ եւ ցմահ ազատազրկման, ըստ Ադրբեջանի պետական լրատվական գործակալությունների հաղորդման: Մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունները քննադատել են դատավարությունները՝ դրանք որակելով որպես քաղաքական դրդապատճառներով ցուցադրական դատավարություններ»:

# Մեզանում դեռեւս գործող որոշ բարքերի մասին

...Ութսունինները թվականն էր, ԽՍՀՄ-ԱՄՆ ժողովրդական դիվանագիտության փոխանակման ծրագրի շրջանակներում հայտնվեցի Նյու Յորքում...

Մետրոյի գնացքում էի, անցնում էինք բացօթյա կայարանի մոտով, ամբողջ քաղաքը կարծես ափիս մեջ լիներ...

...Նկատեցի տարեց ալեհեր մի տիկնոջ, կանգնած...

Ընդոստ վեր թռա տեղիցս, այն զիջելով տիկնոջը. այդպես էին մեզ այն դարաշրջանում սովորեցրել...

Ուղեւորները բավականին զարմացած նայում էին ինձ...

Ինձ ուղեկցող Լիդա Մարտինը (Leeda Marting), ծրագրի ղեկավարներից, անթաքույց հպարտությամբ հայտարարեց. «Նա հայ է, Սովետական Միությունից»:

Իսկ հիմա մեզանում վիճակն ինչպիսի՞ն է...

Փառք Աստծո՛, Հայաստանում նման դեպքեր դեռ կան, սակայն շատ ավելի քիչ...

Տարիներ առաջ Ֆրանսիայից, Մայր հայրենիք եկած «քույրս»՝ Դանի Կայֆաջյանը, զբոսնելով Երեւանի կենտրոնում, դժբախտաբար հանդիպել էր այն բանին, որ անթրաշ մեկը հրվել էր նրան, սակայն նույնիսկ ներողություն չէր խնդրել...

«Մեր ազգին խիստ անհրաժեշտ է շնորհք», ասաց փոքրամարմին, սակայն մեծ սրտով ՔՈՒՅՐՍ...

...Մի լակոտ, կներե՛ք այս բառիս համար, իր պապի տարիքի ծերունու հետ խոսում է «դու»-ով, եւ... «արայով»...

Ընդհանրապե՛ս, անկախ տարիքից, պարտադիր է, որ բոլորը հարգեն բոլորին...

Անցնենք մի այլ թեմայի...

...Քաղաքացիական հասարակություն մեզանում, ավաղ, այդպես էլ չձեւավորվեց, եւ, որպես հետեւանք, չստեղծվեցին կին-տղամարդ բարեկիրթ ու պատշաճ հարաբերություններ...

...Եթե աղջնակին/կնոջը տեղ ես զիջում տրանսպորտում, կամ դուռն ես բացում նրա առաջ, ապա նրանց մեծամասնությունը «շնորհակալություն» էլ չի ասում, չի ժպտում՝ վաաայ, Աստված մի արասցե, կմտածեն՝ նա... երազում է քո մասին (?!!)...

Ինչպես եւ շատ հարցերում, այստեղ եւս մեծ դեր ունի կրթությունը:

Հավելյալ դպրոցին/բուհին, այստեղ մեծ դեր ունեն այն մարդիկ, որոնց համար հարգանքը մեծերի նկատմամբ նորմա է:

Մի փոքր բարետեսություն է ներշնչում այն, որ ուսուցիչների աշխատավարձերը բարձրացնելուց հետո հազարավոր երիտասարդ ուսուցիչներով համալրվել են դպրոցները

...Պետք է անհապաղ վերանայվի հեռուստաալիքների կոնտենտը, եւ անհրաժեշտ է կտրուկ միջոցներ ձեռնարկել բարեկրթությունը արմատավորելու համար:

Մի հարց էլ կա:

Ժամանակակից տեխնոլոգիաները բերում են նրան, որ ավագ սերունդը դադարում է լինել կենսափորձի, գիտելիքների, իմաստության հիմնական աղբյուր:

Բացի այդ, ավաղ, ավագ սերունդը չի հասցնում տիրապետել արագ զարգացող տեխնոլոգիաներին, ինչին կանդրադառնանք առանձին...

ԳՈՒՐԳԵՆ ԽԱՃԱԿՅԱՆ

# ԱՄՆ փոխնախագահի Վենսի նամակ-պատասխանը հայ ժողովրդին



«Սիրելի՛ հայ ժողովուրդ, ես եւ Ուշան ցնցված ենք ձեր ջերմ ընդունելությունից, պաշտոնական ընթրիքին մատուցված զանազան ուտեստներից: Ես չգիտեի, որ համբուրգերի հայրենիքը Հայաստանն է, որը ձեզ մոտ կոչվում է բրդուճ: Իմ քարտուղարությունը զբաղվում է տասնյակ հազարավոր նամակներով, դրանց տեսակավորմամբ եւ, վստահ եղեք, մինչեւ 2050 թիվը ես դրանց բոլորին կպատասխանեմ: Բայց մի քանիսին որոշեցի իսկույն արձագանքել:

Ներողություն եմ հայցում պարոն Քերոփ Մամիկոնյանից նրա հրավերը մերժելու համար: Նա ինձ հրավիրել էր Երրորդ մասի դռեր՝ բոզբաշ ուտելու: Խնդիրը լոկացիայի մեջ էր. այն ամերիկյան ռադարների ոչ անվտանգ զոնայում է գտնվում, եւ մեզ խստորեն խորհուրդ է տրվում շրջանցել այդ վայրը: Մենք կբավարարենք նրա թոշակը բարձրացնելու խնդրանքը, երբ որ նա Ամերիկայի սիթիզն դառնա, եթե դառնա:

Շնորհակալ եմ նաեւ 90 ամյա Ժենյա տատիկին իր ջերմ բարեմաղթանքների համար, մասնավորապես՝ «Գյոռբագյոռ լինեք դո՛ւք էլ, Թրա՛մփն էլ, Ամերիկա՛ն էլ, թող Բայդենի ականջն էլ կանչի: Տարոսը Էրդողանին եւ Ալիեւին»: Նույնն էլ ձեզ եմ ցանկանում, բայց նախ պետք է ճշտեմ՝ What means gyorbagyor?

Ձեր խնդիրներն ավելի շատ են, քան ԱՄՆ-ի 350 միլիոն բնակիչների բոլոր հարցերը միասին վերցրած: Հիմա եմ հասկանում, թե ինչու նախագահ Վիլսոնը հրաժարվեց Հայկական մանդատից: Կհանդիպենք, շուտով:

Ընդմիշտ ձեր՝

Ջեյմս եւ Ուշա Վենսեր:

Հ.Գ.- Նիկոլի հետ պայմանավորվել էինք միասին այցելել Մեծ Եղեռնի հուշահամալիր, բայց երբ դուրս եկանք «Բուռչոյի մոտ» օբյեկտից, կորցրեցինք իրար»:

ԱՐԵԳ ՍԱՎԳՈՒԼՅԱՆ

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

# Ռազմիկ Մարուքյան. Մշտապես փնտրելով նոր մարտահրավերներ

*__ԵՐԵՎԱՆ-ՎԼԱԴԻՎՈՍՏՈԿ__ - Բալետի պարող __Ռազմիկ Մարուքյանը__ (ծնված 2000-ին, Էջմիածնում) 2009-2016 թվականներին ուսանել է Երեւանի պարարվեստի պետական ուսումնարանում: 2017-2020 թվականներին եղել է Սպենդիարյանի անվան ազգային ակադեմիական օպերայի եւ բալետի թատրոնի բալետի արտիստ, 2020 թվականից՝ առաջատար մենակատար: 2017-ին Բրյուսելում կայացած «Արաբեսկ» միջազգային մրցույթում գրավել է առաջին տեղը եւ արժանացել «Ամենաարտիստիկը» հատուկ մրցանակին: 2018-ին USA IBC միջազգային մրցույթում ստացել է «Ժյուրիի համակրանք» մրցանակը, 2019-ին Սոչիում կայացած «Աշխարհի երիտասարդ բալետ» մրցույթում արժանացել է երկրորդ մրցանակի եւ արծաթե մեդալի: Երեւանյան բեմում նրա դերապարերից են՝ Զվեզդիչ («Դիմակահանդես»), Արմեն («Գայանե»), Կրասոս («Սպարտակ»), Ալբերտ («Ժիզել»), Բազիլ («Դոն Կիխոտ»), Զիգֆրիդ («Կարապի լիճը»), Ծաղրածու («Բյուրեղապակյա դղյակը»), իշխան Լիմոն («Չիպոլինո»), Օդաչու («Փոքրիկ իշխանը») եւ այլն: 2024 թվականին Պերմում կազմակերպված Եկատերինա Մաքսիմովայի անվան «Արաբեսկ» ռուսական բալետի 18-րդ մրցույթում, որին մասնակցել են ավելի քան 200 արտիստներ եւ պարուսույցներ աշխարհի 14 երկրից, նա ճանաչվել է մրցույթի հաղթող՝ ստանալով առաջին մրցանակը: 2023-2025 թթ. որպես հրավիրված մենակատար աշխատել է Վրաստանում, Իտալիայում, ԱՄՆ-ում, Լիտվայում, Գերմանիայում, իսկ անցյալ տարվա հուլիսից Մարիինյան թատրոնի Պրիմորյեի բեմի բալետային թատերախմբի (Վլադիվոստոկ) պրեմիեր է:*

**-Սիրելի՛ Ռազմիկ, պարողների հետ զրուցելիս սիրում եմ մեջբերել հայտնի մարդկանց խոսքերը պարարվեստի մասին: Մեծն Միխայիլ Բարիշնիկովը մի առիթով ասել է. «Երիտասարդ արվեստագետի կյանքում գալիս է մի պահ, երբ նա հասկանում է, որ պետք է բեմ հանի իր ներսից ծնված ինչ-որ բան: Նա պետք է ինչ-որ բան տա, որպեսզի կարողանա ինչ-որ բան ստանալ»: Ի՞նչ ես կարծում, քեզ համար եկե՞լ է այդ պահը:**

-Կարծում եմ՝ Բարիշնիկովը դա ասելիս նկատի է ունեցել, որ պետք է բեմ հանել մի այնպիսի բան, որը քեզ կներկայացնի որպես առանձնահատուկ մեկը: Իհարկե, իմ կարիերայում արդեն եղել է այդ փուլը, եւ ամեն անգամ բեմ ելնելով այլեւս կապ չունի, թե դու ինչ կերպար ես մարմնավորում. առանձնահատկությունը քո անձն է: Չէ՞ որ տեխնիկան չէ, որ ցույց է տալիս արտիստի անհատականությունը. այն պարզապես ընդգծում է այն:



**-Ո՞ւմ ես համարում քո ուսուցիչները:**

-Ես ավարտել եմ մեր երախտավոր բալետային մանկավարժ **Հովհաննես Դիվանյանի** դասարանը: Պարապել եմ նաեւ **Արման Բալմանուկյանի** հետ, մասնավորապես մրցույթների պատրաստվելիս: Արմանն էր, որ ստեղծեց ինձ որպես պարող ու արտիստ:

**-Քո կարիերային հետեւում եմ 2018 թվականից: Հիշում եմ, անհանգստանում էի, երբ 2020-ին բանակում էիր. ես միշտ սխալ եմ համարել զինծառայությունը բալետի արտիստի համար: Ինչպե՞ս ես հիշում այդ երկու տարիները:**

-Ես համաձայն եմ ձեզ հետ: Այո, դա դժվարություն է պարողի կյանքում, բայց ես շատ ջերմորեն եմ հիշում այդ երկու տարիները: Տվյալ պահին կարող եմ ասել, որ դրանք իմ կյանքի լավագույն երկու տարիներից էին, եթե ոչ՝ լավագույնը: Ես ինձ իրական էի զգում: Այն, ինչ կատարվեց իմ ծառայության այդ երկու տարիների ընթացքում, ձեւավորեց իմ «ես»-ը: Դժվար էր, ինչ խոսք, բայց հիմա հետ նայելով՝ բոլոր դժվարությունները ժպիտով եմ հիշում: Որոշ բաներ՝ նաեւ վախով ու ժպիտով:

**-Արտաքինդ ասես ստեղծված է դասական պարողի համար: Իսկ, քո կարծիքով, բալետային արքայազնը չպե՞տք է ունենա նաեւ համապատասխան ներքին:**

-Արտաքինը միշտ չէ, որ ամենակարեւորն է: Այո՛, դասական ներկայացումների համար դա շատ կարեւոր է, բայց եթե արտիստի ներսում կրակ չկա, ուզում ես Ալեն Դելոն եղիր. բեմում պետք է «խոսել»: Մեր դեպքում՝ խոսել մարմնով, հոգով:

**-2018-ին երջանկահիշատակ ռուս բալետային քննադատ Ալեքսանդր Ֆիրերը, դիտելով քեզ «Գայանե»-ում, «Հայ բալետի փաստարկները» հոդվածում գրել էր. «Փայլուն 18-ամյա Ռազմիկ Մարուքյանը (Գիքո) բալետում հազվագյուտ համադրությունների տեր է՝ նախանձելի արտաքին, արտիստականություն, պլաստիկա, գերազանց տեխնիկա, ձգվածք եւ հրաշալի ոտնաթաթ, ինչը հատկապես կարեւոր է դասական պարողի համար: Նա, անկասկած, հայ բալետի ապագան է» («Музыкальная жизнь», 2018, թ. 8, էջ 65): Եվ իսկապես, մեզ հիացրել ես մի շարք գլխավոր դերապարերով: Թվում էր՝ քեզ դերեր չպիտի պակասեին: Սակայն այսօր դու հանդես ես գալիս Ռուսաստանի ծայրամասում, մինչդեռ ռուս արտիստներ գալիս են աշխատելու մեր բալետային խմբում:**



*Ռազմիկ Մարուքյանը «Դոն Կիխոտ» բալետում (լուսանկարիչ՝ Արտավազդ Հայրապետյան)*

-2018 թվականը հենց այն ծանր տարին էր ինձ համար, երբ առաջացավ ծառայության գնալու հարցը, եւ մեր հյուրախաղերը համընկան իմ ծառայության մեկնելու նախորդող վերջին շաբաթվա հետ: Կարծում եմ՝ դա էլ նպաստեց, որ իմ Գիքոյի կերպարը հասցնեմ այնտեղ, ուր պետք է:

Ինձ դերերը միշտ պակասել են: Ես փորձել եմ ամեն հարմար առիթով գտնել նոր մարտահրավերներ: Հայաստանում ես կատարել եմ մեր խաղացանկի բոլոր հնարավոր եւ անհնար դերերը: Սա շատ նուրբ հարց է. ես չեմ հեռացել Հայաստանից որեւէ խնդրի պատճառով: Ես եկել եմ՝ նոր դերեր, նոր կարեւորություն, նոր որակ գտնելու համար իմ կյանքում:

Իսկ ներկայումս, այո՛, ես այստեղ եմ՝ Մարիինյան թատրոնի Վլադիվոստոկի մասնաճյուղում: Կարծում եմ՝ անունն արդեն խոսում է թատրոնի որակի մասին: Ներկայումս ես երջանիկ եմ այստեղ: Ի դեպ, Պետերբուրգում բնակվող մեր հայրենակիցները կարող են մարտի 2-12-ին ինձ տեսնել Մարիինյան թատրոնի ներկայացումներում:

**-Ինչպիսի՞ն է բալետի վիճակը Վլադիվոստոկում: Գիտենք, որ ռուսական մշակութային խմբերն այսօր պատժամիջոցների պատճառով զրկված են Արեւմուտքում հյուրախաղերից, իսկ ձեր թատրոնը գոնե կարողանո՞ւմ է ելույթներ ունենալ տարածաշրջանում՝ Ճապոնիա, Կորեա...**

-Թատրոնը տարեկան ունենում է առնվազն երեք-չորս հյուրախաղ տարածաշրջանում: Այո՛, կան դժվարություններ՝ պատժամիջոցների պատճառով, բայց մշակույթն այնպիսի ուժ է, որը կկոտրի ցանկացած պատնեշ: Թատրոնի որակը, իմ կարծիքով, նույնիսկ քննարկելու կարիք չունի. թատրոնի անունն ինքնին խոսում է որակի մասին: Միայն վերջին հինգ ամիսների ընթացքում արդեն ունեցել եմ չորս նոր առաջնախաղ:

**-Ռազմի՛կ ջան, քեզ նորանոր հաջողություն եմ մաղթում եւ հույս ունեմ, որ մի գեղեցիկ օր դու կվերադառնաս Երեւանի օպերայի եւ բալետի թատրոն՝ շարունակելու ուրախացնել քո հայրենակից երկրպագուներին:**

-Ես երբեք չեմ փակել իմ հետեւից դուռը: Առաջին օրն իսկ ասել եմ՝ եթե պետք լինեմ թատրոնին, եւ թեկուզ աննշան ցանկություն լինի ինձ հրավիրել՝ պատրաստ եմ գալ եւ գլխավորել ներկայացումներ: Ես մեծ սիրով ու հարգանքով եմ վերաբերվում իմ հարազատ թատրոնին եւ շատ եմ սիրում այն:

Շատ շնորհակալ եմ հարցազրույցի համար: Ինձ շատ հաճելի էր կիսվել այս ամենով: Շնորհակալ եմ բոլոր անդրադարձների համար:



# 100-ամյա հայագետի մահը

Փետրվարի 2-ին, 100 տարեկանում վախճանվել է ֆրանսիացի կաթոլիկ բենեդիկտյան վանական, գիտնական, եկեղեցու պատմաբան, արեւելագետ, հայագետ, թարգմանիչ **Շառլ Ռենուն**: Նա ծնվել էր 1925-ի ապրիլի 30-ին, 1948 թվականին միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Օտ-Կալակի Բենեդիկտյան աբբայություն եւ ձեռնադրության ժամանակ ստացել Աթանաս անունը: Օտ-Կալակի աբբայությունում եւ Թուլուզի կաթոլիկ ինստիտուտում ուսումնասիրել է ասորերեն, հայերեն եւ վրացերեն: 1956-1958 թթ. Ռենուն ուսումը շարունակել է Փարիզի կաթոլիկ ինստիտուտում եւ Սորբոնի բարձրագույն դպրոցում, որտեղ ուսումնասիրել է արեւելյան քրիստոնեություն, աստվածաշնչյան գրականություն, պատրիարքական հայրաբանություն եւ պատարագի ժամերգություն: Փարիզի կաթոլիկ ինստիտուտում պաշտպանել է դոկտորական թեզ «Երուսաղեմի Ճաշոցը (թարգմանություն ֆրանսերեն եւ մեկնաբանություններ)» թեմայով, իսկ Սորբոնի համալսարանում արժանացել է դիպլոմի՝ «Եփրեմ Մծբնացու ասորերեն քարոզը Նիկոմեդիայի մասին (ասորերեն հատվածների եւ հայերեն բնագրի թարգմանությունը ֆրանսերեն)» հրատարակման համար: 1965-1990 թվականներին աշխատել է Ֆրանսիայի Գիտական հետազոտությունների ազգային կենտրոնում, որտեղ ստացել է «Գիտական հետազոտությունների դոկտորի 2-րդ կարգի» աստիճան: Եվրոպայի գիտական մամուլում հրատարակել է ֆրանսերեն, իտալերեն, անգլերեն եւ գերմաներեն հայագիտական (նաեւ վրացագիտական եւ աղվանագիտական) աշխատություններ՝ նվիրված Հայ եկեղեցու ծիսական գրականությանը (մասնավորապես՝ Ժամագրքին եւ Ճաշոցին), Հայ եկեղեցու տոներին, պատարագին, հայերեն ձեռագրերի, առանձին հեղինակների (Դավիթ Քոբայրեցի, Աթանաս Ալեքսանդրացի) եւ այլ թեմաների մասին:

Ա. Բ.

ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

# Նա տեսել է Էրգիրն իր հոր աչքերով

*Հայաստանի Գրողների միության կլոր սրահում օրերս կայացած հանդիսությունը նվիրված էր բանաստեղծ, արձակագիր **Ռաֆայել Սահակյանի** 90-ամյա հոբելյանին: Նա մեկուկես տասնյակ գրքերի հեղինակ է, որոնց թվում են «Ծաղկած աղոթք», «Այգեպսակ», «Խնկաբույր աղոթքներ», «Ծիրանավոր աղոթարան», «Իրիկնային տաղարան» բանաստեղծական ժողովածուները, «Էրգիրը տեսա հորս աչքերով» ուղեգրությունը, «Արմավիր» 1700 էջանոց տարեգրություն-հանրագիտարանը: Արցախյան ազատամարտի հերոսների մասին պատմող «Գիրք վշտի եւ հպարտության» գիրքն արժանացել է ՀՀ Պաշտպանության նախարարության եւ ՀԳՄ մրցանակին, «Այգեպսակ» ժողովածուն՝ ՀԳՄ, «Զորավար Անդրանիկ» միության եւ «Հայաստան» թերթի մրցանակին, «Էրգիրը տեսա հորս աչքերով» գիրքը՝ «Հրանտ եւ Մանուշակ Սիմոնյաններ» գրական ամենամյա մրցանակին: 2006-ին Ռ. Սահակյանին շնորհվել են ՀԳՄ «Գրական վաստակի համար» մեդալը եւ ՀՀ Մշակույթի նախարարության Ոսկե մեդալը: Վաստակաշատ գրողն Արմավիրի մարզում երկար տարիներ եղել է կրթության ոլորտի պատասխանատուներից, մարզային «Հայրենականչ» թերթի խմբագիրն է:*



«Կարոտի գրականությունը» հատկապես հայ մշակութաբանական եզրույթ է: Այդ գրականության ակունքները, թերեւս, պետք է փնտրել դեռեւս միջնադարյան հայ պանդխտության երգերում, սակայն դրա գրականագիտական ձեւակերպումը տրվեց 20-րդ դարում, իսկ վերջինիս նմուշներ համարվեցին դարասկզբի հայոց Նախճիրից հետո ստեղծված գրական երկերը, որոնցում կորուսյալ հայրենիքի ցավն էր, կարոտը վաղեմի կյանքի, եւ որոնցում առանձին գուրգուրանքով մտովի վերստեղծվում էր կորսվածը: Քանի տրոփում է հայի արյան հիշողությունը, քանի կարմիր գնդիկների հետ ժառանգվում է ցավի զգացողությունը, կորստի հետ անհաշտությունը, ետվերադարձի հավատը եւ պահանջատեր լինելու անկասելի վճիռը, կստեղծվեն կարոտի կանչի արձագանքով թաթախված տողեր, եւ այդ տողերը գերակշռում են նաեւ Ռաֆայել Սահակյանի ստեղծագործություններում: Նրա ստեղծած գրականության, մեր կարծիքով, «թագը» հանդիսացող «Էրգիրը տեսա հորս աչքերով» վեպ-հուշագրությունում գեղանկարչի վրձնին հանգույն հարուստ բառապնակով, բազում գունախաղերով տրված են կարոտի բոլոր երանգախաղերը՝ ափսոսանքից մինչեւ կորստի ցավը: Երբ ձեռքս առա այդ գիրքը, մի քանի էջ թերթելուց հետո սկսեցի մատիտով ընդգծումներ անել բազում հատվածներում՝ յուրահատուկ նկարագրություններ՝ աչքերի միջոցով հոգու մաղով անցկացված, բառահայտնություններով լեցուն: Ասես հայերենի հարուստ բառապաշարը չէր բավարարել հեղինակին՝ հաղորդելու ապրումների այն ամբողջ աշխարհը, որ կրել էր իր կորուսյալ երկիրն այցելելիս: Ահա այդ ապրումները, որ վեպ-հուշագրությունում իրենց արձանագրությունն են գտել, փոխադրված են իր բանաստեղծական գրքերը: Դրանք՝ կարոտի, ափսոսանքի, սիրո կանչերի, տեղ-տեղ օրորոցայինների երգեցողության հնչերանգներով, պատանության ջինջ երազների նկարագրերով, վերընձյուղման հավատով, լուսե՜ղ են, ո՜չ անկումային տրամադրությամբ: Բանաստեղծի համար կարոտն այն ոգեղեն բնակարանն է, որում ապագա արարումներին նախորդող աղոթքներ են հնչում:

Իր «ոսկեման» երգերի մի փունջ ամփոփված է վաղեմի սերերի, մանկության հուշերի, մայրության առաջ իր բառեղեն ծնրադրումներով հյուսված բաժիններում: Դրանցում «ծիածանվող շշուկներ» կան, սիրո պատկերների «անձրեւաշաղ է», բանաստեղծական պատկերների «ծաղկաքաղ»: Որպես օրինակ, մորը նվիրված բազում երգերից մեկը մեջբերեմ.

*«Այնքան մոտիկից շունչդ զգացի՝ բուրվառ էր գոցված,*
*Ծիածանածամ շշուկը շուրթիդ տիրամոր տաղ էր,*
*Սիրո պատկերը քո աչքերով էր իմ առջեւ բացված,*
*Ամպը հրեղեն իր ձին էր թամբել՝ անձրեւաշաղ էր:*
*Դեռ քնած էին աստեղադարձի մակույկներն անգին,*
*Հեռվից ինձ կանչող մանկության լույսը տխուր ու պաղ էր,*
*Ինձ ու՞ր էր տանում մորս աչքերում շվարած արփին,*
*Ես չգիտեի՝ մեր հին ձորափում ի՞նչ ծաղկաքաղ էր...»:*

Նրա քերթվածքներից շատերը հիացման ծնրադրում-տաղեր են՝ բնության հասունության այն պահին, երբ ծառերը «ծոցվոր են ու ամոթխած», իսկ բանաստեղծի «երակներում գինու ծփուն կարոտն» է ելել.

*«...Ինչ արար է բացել աշունն ավետաբեր՝*
*Խումար օրվա հյուսքը թելիկ-մելիկ նարոտ,*
*Վազն է արբունքահոտ՝ խանդոտ ու անհամբեր,*
*Նրա երակներում գինու ծփուն կարոտ,*
*Ինքը՝ սեր ու սարսուռ, շուրթին՝ շող ու շանթեր»:*

Բնության պատկերներում քնքշանում, նույնանում է իր գծած պատկերներին. դրանք, ասես, նույն սիրո խոստովանություններն են, խոսում է բնության հետ՝ կարծես սիրելի կնոջը սիրո խոստովանություն շշնջա.

*«Դուք ինձ ներե՜ք, ներե՜ք, լուռ ծաղիկներ դաշտի,*
*Ձեր ծնրադիր վերջին՝ հուղարկավոր չեղա,*
*Այնտեղ ձյուն է հիմա ու քամին է վշտի,*
*Ես ուշացած, շատ ու՜շ, շշնջում եմ՝ մեղա»:*

Ռ. Սահակյանի բնանկարները մարդու շնչառություն ունեն, իսկ մարդկային հարաբերությունները բնության շարժով ու գույնով են նկարագրված, եւ այդ ներդաշնակությունն ամենուր է: Բնության օրհներգ-բանաստեղծական պատկերները սահունորեն տանում են դեպի իր հայրենակարոտ երգերը:

*«Ես ու՞ր հեռանամ,*
*Երբ այս կապույտը սարերի վրա*
*Իմ օրորոցի ծածկոցն է եղել...»:*

Իր պատրանքներն իր ծնողների պատկերին հյուսված հայրենի եզերքի հետ են կապված.

*«Հորս պատկերով մեր ձորն էր ծաղկել,*
*Աստվածություն կար այդ բարիլույսին,*
*Մայրս երկնքից օրհնանք էր բերել*
*Հրեշտակների ճերմակ ուսերին...»:*

Իր մանկության <վտարանդի կապույտ օրերի> պատումները տանում հասցնում են դեպի պապերի էրգիր, դեպի Ծովասար, դեպի կորուսների բերած ցավերի անանուն ակունքներ: Եվ այստեղ է, որ այն, ինչ հանդիպել է ընթերցողին նրա վեպ-հուշագրությունում, իր չափածո արտահայտությունն է ստանում «Ծովասարից ծուխ էր բարձրանում» բանաստեղծությունների շարքում: Հայրերի երկիր այցը ցավ, հպարտություն, վերադարձի հույս, կոչ ու կանչ է. ճամփին ամեն հանգրվան, ամեն մի մասունք բանաստեղծական նկարագիր է ստանում, իր արձանագրությունը՝ գրողի հոգեաշխարհի արձանքներով: Սրանք զուտ նկարագրություններ չեն, տվայտանքնե՛ր են. Առաքելոց վանքում, Նեմրութի գագաթին, Անդոկ սարի փեշերին, Բայազետում, Էրզրումում, Կարսում, այլուր իր պապերի ու հայրերի կարոտն ու ցավը կրող անհատն է, հայը, որ անհաշտ է ու հավատով լեցուն, որ վերադարձի ճանապարհները բացվելու են... Այս երգերը նաեւ ծնրադրումներ են սուրբ հիշատակների առաջ՝ դարձյալ բնության պատկերներով լեցուն:

Բազմանշանակ է հնչում իր պոեմներից մեկի ավարտին հնչող հարցադրումը, որ հռետորական է ու արձագանքում է այդ կարոտը կրող յուրաքանչյուր հայի սրտում, որ ունի արյան հիշողություն եւ իր արմատների զգացողություն.

*«Սասնա ծռերի կեծակն ո՞ւր գնաց,*
*Արծիվներ թռա՞ն Անդոկա սարից,*
*Մըր խաս փեթակի մեղրն ո՞ւր մնա՜ց,*
*Մհե՛ր, դու՛րս արի Ագռավու քարից»:*

## Ցեղասպանությունը դադարեցնելու աղերսանքը «Homo Politicus»-ում մնում է «Ձայն բարբառոյ յանապատի»

Բեռլինից **Մուրիել Միրաք-Ուայսբախը** «Արմինյն Միրոր-Սփեքթեյթրի» ընթերցողներին տեղեկացնում է, որ հունվարի 23-ին եւ 24-ին համապատասխանաբար «Լեփսիուս Հաուսում» (Պոտսդամ) եւ «AKEBI քաղաքացիական հասարակության խմբավորման» գրասենյակում տեղի է ունեցել «Homo Politicus» (լատիներեն տարբերակը՝ «Քաղաքական փորձագետ կամ ակտիվիստ» բառերի) խորագրով ֆիլմի ցուցադրումը: Բացի հյուրընկալող կողմի ներկայացուցիչներից եւ համակարգողներից, ի դեմս **Ուլրիխ Ռոզենոյի** եւ **Օնդերջան Մուտիի**, ֆիլմարտադրիչ եւ ռեժիսոր **Հաջի Օրմանը** եւ ցեղասպանագետ **Թեսսա Հոֆմանը** ներակյացրել են ֆիլմի պատմական հենքը եւ Երկրորդ աշխարհամարտից մինչ օրս ընդունված ցեղասպանության վերաբերյալ իրավական եւ ինստիտուցիոնալ նախաձեռնությունների սահմանումները:

Քսան րոպե տեւողությամբ ֆիլմը վերակենդանացնում է 1915-ի օգոստոսի 10-ին գերմանացի հոգեւորական եւ մարդասեր Յոհաննես Լեփսիուսի հանդիպումը Թուրքիայի Օսմանյան շրջանի ռազմական նախարար Էնվեր Փաշայի հետ:

Լեփսիուսը, որ 1890-ականների համիդյան ջարդերի ժամանակ մարդասիրական օգնություն էր տրամադրել տուժածներին, 1915-ին վերադարձել էր Կոնստանդնուպոլիս, որպեսզի կանգնեցնի ցեղասպանությունը: Նրան հաջողվել էր Էնվերի հետ անձամբ տեսակցելու իրավունք ձեռք բերել:

Ֆիլմում Լեփսիուսի դերը կատարում է, ըստ Միրաք-Ուայսբախի, **Պիտեր Շտրոմբեքը**, իսկ Էնվեր Փաշայի դերը՝ **Մեհմետ Յըլմազը**:



*Էնվեր փաշան եւ Յոհաննես Լեփսիուսը «Homo Politicus»-ում:*

Լեփսիուսը խոսակցությունն սկսում է Էնվերին շոյող խոսքերով, բայց երբ ակնարկում է տարագրությունների վերաբերյալ ականատեսների վկայությունների մասին, Էնվերը կտրականապես ժխտում է պնդելով, որ իր հյուրը ապատեղեկացված է: Հոգեւորականը հանդգնում է խիզախորեն պահանջել եւ առաջարկել, որ գործի դնելով իր հեղինակությունը, դադարեցվեն կոտորածները: Էնվերը մնում է անդրդվելի: Վերջում իբր ընդառաջելով խոստանում է հայերի բեռը մի փոքր թեթեւացնել, եթե Լեփսիուսն իր հերթին իրեն հանձնի նրանց ապահովագրության վկայականների վերաբերյալ տեղեկատվություն, ինչը «պարսավանքի արժանի խնդրանք» է համարում մարդասեր-հոգեւորականը: Այստեղից երկխոսությունը ընթանում է սկզբունքային արժեքների բախման ուղղությամբ: Լեփսիուսը խոսում է միջազգային իրավունքի, արդարության, խղճահարության եւ մարդկայնության մասին, Էնվերը ցինիկաբար կրկնում է, որ «հայերը դավաճանել են մեզ, ուստի պետք է պատժվեն»:

Ի վերջո, Լեփսիուսը հարկադրված եզրակացնում է, որ կառավարության վրա ազդեցություն գործելու փորձերը անօգուտ են եւ միակ հնարավոր տարբերակը վավերագրելն է կատարվածը եւ հանրայնացնելը: Նա բազում հարցազրույցներ է իրականացնում դիվանագետների, ականատեսների եւ մարդասիրական աջակցություն ցուցաբերողների հետ, որոնք մանրամասն տեղեկություններ են հաղորդում կոտորածների եւ տեղահանումների վերաբերյալ:

⇨6

# «Վենսը հող է նախապատրաստում դեպի Ասիայի սիրտը տանող «Թրամփի ուղու» համար»

***Հյուսիսամերիկյան «Ամերիքըն թինքըր» (American Thinker) պահպանողական էլեկտրոնային հանդեսի փետրվարի 9-ի հոդվածը թարգմանաբար ներկայացնում ենք զգալի կրճատումներով:***

***Նյութի հեղինակը գիտության դոկտոր, Հունգարիայի միջազգային հարաբերությունների ինստիտուտի ավագ գիտաշխատող ՓԻԹԵՐ ԿՐԱՆԻՑՆ է:***



Վաշինգտոնի պատասխանը Չինաստանի «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությանը սկսվում է Հայաստանում, եւ փոխնախագահի **Ջ.Դ. Վենսը** ժամանել է Հարավային Կովկաս՝ դրա համար հող նախապատրաստելու նպատակով: Թրամփի «Միջազգային խաղաղության եւ բարգավաճման ուղին» (TRIPP) կարող է դառնալ առաջին քարը հսկայական տրանսպորտային ցանցի եւ տնտեսական միջանցքների հիմքը, որոնք կոչված են ապահովելու Միացյալ Նահանգների համար կենսականորեն կարեւոր եվրասիական մատակարարման շղթաները եւ դիմակայելու չինական ու ռուսական ազդեցությանը:

Կենտրոնական Եվրասիան դարձել է ժամանակակից մեծ տերությունների՝ Չինաստանի, Ռուսաստանի, Իրանի, Թուրքիայի եւ, վերջերս, Միացյալ Նահանգների միջեւ մրցակցության հիմնական ասպարեզ: Այս տարածաշրջանը ռազմավարական կարեւոր դիրք է գրավում՝ լինելով սահմանակից Աֆղանստանին, Իրանին եւ Չինաստանին, ու նաեւ բացառիկ հարուստ է հանքային պաշարներով: 1990-ականներին ԽՍՀՄ փլուզումից հետո Չինաստանը արագորեն դարձավ այս տարածաշրջանի առաջատար ներդրողը: Հենց Կենտրոնական Եվրասիայում է Չինաստանը մշակել իր հավակնոտ գլոբալ ռազմավարությունը՝ «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությունը: 2013 թվականին Ղազախստանի Աստանա քաղաքում Չինաստանի նախագահ **Սի Ցզինպինը** հայտարարեց Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտու ստեղծման մասին, որը հետագայում վերածվեց Պեկինի առաջատար աշխարհաքաղաքական նախագծի: Այսօր «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության միջոցով Չինաստանը ձգտում է ընդլայնել իր տնտեսական ու քաղաքական ազդեցությունը Լատինական Ամերիկայում, Աֆրիկայում եւ Ասիայում: Սակայն նախագծի մեկնարկից ի վեր Կենտրոնական Եվրասիան մշտապես մնացել է դրա հիմնական կոորդինացիոն կենտրոններից մեկը:

ԱՄՆ-ը ներկայումս Եվրասիայում իրականացնում է վերանայված մեծ ռազմավարություն՝ մայրցամաքում Չինաստանի աճող ազդեցությանը հակազդելու համար: Այս ռազմավարությունը ներառում է Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորման, Եվրոպայում պատասխանատվությունների կրճատման, Մերձավոր Արեւելքում Աբրահամի համաձայնագրերի ընդլայնման, Հնդկաստանի ռազմավարական հավասարակշռման զսպման եւ Հնդկա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում ԱՄՆ-ի գերիշխանության ամրապնդման ջանքեր: Չնայած Կենտրոնական Ասիան եւ Հարավային Կովկասը նախկինում երկրորդական էին ԱՄՆ արտաքին քաղաքական մտածողության մեջ, Թրամփի երկրորդ վարչակազմի օրոք իրավիճակը փոխվել է: 2025 թվականի նոյեմբերին նախագահ **Դոնալդ Թրամփը** Սպիտակ տուն հրավիրեց Կենտրոնական Ասիայի հինգ պետությունների ղեկավարներին եւ հայտարարեց 20 միլիարդ դոլարի ներդրումային փաթեթի մասին՝ նախատեսված գլխավորապես տեխնոլոգիաների զարգացման եւ կարեւորագույն հանքային հանածոների արդյունահանման համար: Բայցեւայնպես, տարածաշրջան ԱՄՆ-ի ֆիզիկական հասանելիությունն ապահովելու համար նախ պետք է ստեղծվի տարանցիկ միջանցք: Այս դերը վերապահված է ԹՐԻՓՓ-ին՝ «Թրամփի ուղուն՝ միջազգային խաղաղության եւ բարգավաճման համար»:

### Կառուցել ԹՐԻՓՓ-ը՝ ընդսմին առանց ծուղակի մեջ ընկնելու

Առաջին հայացքից ԹՐԻՓՓ-ը կարող է թվալ համեստ եւ բավական աննշան ենթակառուցվածքային նախագիծ այնպիսի սահմանափակ աշխարհաքաղաքական կշիռ ունեցող երկրում, ինչպիսին Հայաստանն է: Ադրբեջանի եւ նրա էքսկլավ Նախիջեւանի միջեւ նախատեսված, հարավային Հայաստանով անցնելիք միջանցքն ընդամենը 42 կիլոմետրանոց ճանապարհ է, որը պետք է կառուցեն եւ պահպանեն ամերիկյան ընկերությունները: Սա ամերիկյան վերահսկողության ներքո ամբողջ աշխարհում հազարավոր կիլոմետրերով ստեղծվող առեւտրային ուղիների միայն մի փոքր մասն է: Սակայն ԹՐԻՓՓ-ը սկզբունքորեն տարբերվում է սովորական ենթակառուցվածքային նախագծերից: Այս երթուղին կարող է դառնալ Չինաստանի «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությանը հակազդելուն ուղղված աշխարհատնտեսական եւ աշխարհաքաղաքական մեծ ռազմավարության անկյունաքարը Եվրասիայում: ԱՄՆ-ին Թուրքիայի, Հայաստանի եւ Ադրբեջանի միջոցով Կենտրոնական Ասիա մուտք ապահովելով՝ այս միջանցքը կարող է նաեւ դառնալ ռազմավարական կարեւոր հարթակ Ռուսաստանի, Իրանի եւ, ի վերջո, Չինաստանի հետ հարաբերություններում մանեւրելու համար:

Թրամփի երթուղին կձգվի հայ-իրանական սահմանի երկայնքով, որոշ հատվածներում անցնելով Իրանի տարածքից ընդամենը մի քանի հարյուր մետր հեռավորության վրա: Սրանով է բացատրվում Թեհրանի վաղուց եւ կտրուկ դեմ լինելն այս նախագծին:

Թղթի վրա ԹՐԻՓՓ-ը լավ մտածված ծրագիր է՝ ապահովելու ամերիկյան կայուն ներկայությունն ու շահերը աճող աշխարհաքաղաքական նշանակության տարածաշրջանում, ինչպես նաեւ հաստատելու անդրկասպյան կապեր մեծ տերությունների աշխարհատնտեսական մրցակցության սրման պայմաններում: Այն պահանջում է համեմատաբար քիչ ֆինանսական ներդրումներ եւ զորքերի ներկայություն չի պահանջում, սակայն այս նախագիծը կարող է զգալի աշխարհաքաղաքական շահաբաժիններ բերել ինչպես Միացյալ Նահանգներին, այնպես էլ նրա տարածաշրջանային գործընկերներին: Նույնիսկ 42 կիլոմետրանոց միջանցքը կարող է փոխել ուժերի տարածաշրջանային հաշվեկշիռը Արեւմուտքի օգտին եւ դյուրացնել տարածաշրջանային տրանսպորտային ու հաղորդակցական այնպիսի ցանցի ստեղծումը, որը կկարողանա հակակշիռ դառնալ Ռուսաստանի ու Չինաստանի կողմից վերահսկվող ավանդական ու նոր երթուղիներին:

Այնուամենայնիվ կան նաեւ որոշ լուրջ ռիսկեր: Թրամփի երթուղին կարող է հեշտությամբ վերածվել ծուղակի Միացյալ Նահանգների ու նրա տարածաշրջանային գործընկերների համար: Հարավային Կովկասն առաջվա պես բզկտում են կոշտ հակամարտություններ: Հայաստանն ու Ադրբեջանը դեռ չեն ստորագրել խաղաղության պայմանագիրը, իսկ Վրաստանի եւ Ռուսաստանի միջեւ համաձայնություն նույնիսկ չի նշմարվում: Շատերը կարծում են, որ Մերձավոր Արեւելքում 2026 թվականին լարվածությունը կսրվի, եւ նման որեւէ զարգացում կարող է անկայունացնել Իրանի անմիջական աշխարհագրական հարեւանությունը՝ Ադրբեջանից մինչեւ Հայաստան եւ Թուրքիա, առաջացնելով շղթայական ռեակցիա, որը կբորբոքի տարածաշրջանային հակամարտությունները: Թեհրանը, հավանաբար, իր անմիջական հարեւանությամբ ենթադրվող սպառնալիքներին կարձագանքի ճնշող ուժով, քանի որ այն արդեն իսկ ԹՐԻՓՓ-ը համարում է ռազմավարական մարտահրավեր: Նույն կերպ եւ Կրեմլի ղեկավարության ներկայացուցիչները Հարավային Կովկասը համարում են Ռուսաստանի անվտանգության եւ մեծ տերության կարգավիճակի համար առաջնային նշանակություն ունեցող տարածք, ինչի հետ կապված՝ տարածաշրջանում ամերիկյան ներկայության ընդլայնման դեմ Ռուսաստանի էական հակաքայլերը միանգամայն հավանական են:

### Եկեք արտահանենք «Ռեալպոլիտիկ»-ը

Բարյացակամության աշխարհակարգի դարաշրջանն ավարտվել է: Այժմ ռեալիզմը կրկին ձեւավորում է միջազգային հարաբերությունները: «Ուժեղներն անում են այն, ինչ կարող են, իսկ թույլերը տառապում են ըստ հարկի»,- գրել է Թուկիդիդեսը երկու եւ կես հազարամյակ առաջ: Այդ ժամանակվանից ի վեր այս ասացվածքը ծառայել է որպես ուժերի հարաբերակցության հստակ բնութագրում: Սակայն այսօր միջազգային տնտեսական փոխկախվածության խիտ ցանցը սահմանափակում է ուժի անսանձ կիրառումը եւ կանխում ջունգլիների օրենքի բացարձակ տիրապետությունը: Ժամանակակից Realpolitik-ը չի նշանակում պրագմատիզմից հրաժարում, ավելի շուտ այն արտացոլում է պրագմատիկ լուծումների աճող գերազանցումը լիբերալ ինտերնացիոնալիզմի գաղափարախոսական դոգմաների նկատմամբ:

Որպեսզի ԹՐԻՓՓ նախագիծը հաջող լինի, այն պետք է իրականացվի կարեւորագույն հարցերի եւ հնարավոր բախումների նկատմամբ ճկուն, պրագմատիկ մոտեցումների օգնությամբ: Սա ներառում է Ռուսաստանի մտահոգությունների ճանաչումը՝ կապված տարածաշրջանային ուժերի փոփոխվող հաշվեկշռի հետ, եւ այդ խնդիրների լուծումը՝ համակարգման ու համագործակցության միջոցով, շինարարական ընկերությունների հետ գնումների պայմանագրերից մինչեւ Եվրասիական զարգացման բանկի նման հաստատությունների հետ քաղաքականության համակարգումը: Նման միջոցառումները կօգնեն ապահովել, որ արեւելքից արեւմուտք ձգվող ԹՐԻՓՓ առանցքը չխաթարի հյուսիսի եւ հարավի միջեւ գործող կապերը: ԹՐԻՓՓ-ի միացումը վաղուց արդեն գործող տրանսպորտային ցանցերին՝ կօգնի նվազեցնել այս միջանցքի ընկալումը իբրեւ ՆԱՏՕ-ի եւ նրա գործընկերների համար բացառիկ ու պոտենցիալ ռազմականացված ուղու: Միայն նման լավ մտածված ռազմավարության միջոցով կարելի է խուսափել վճռական ու նույնիսկ ագրեսիվ հակազդեցություններից: Եվ միայն այդ դեպքում կարելի կլինի անվտանգ դարձնել «Թրամփի ուղին» դեպի Ասիայի սիրտը:

**Թարգմանեց ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆԸ**

---

# Ցեղասպանությունը դադարեցնելու աղերսանքը «Homo Politicus»-ում մնում է «Ձայն բարբառոյ յանապատի»

⇨5 Այդ բոլորը Լեփսիուսը հետագայում ամփոփում է իր «**Հայ ժողովրդի մահվան երթը: Տեղեկագիր Թուրքիայում հայ ժողովրդի ճակատագրի մասին՝ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում**» խորագրով գերմաներեն հատորում:

Բայց ռեժիսոր Օրմանը այդ հատորից չէ, որ տեղեկացել է հայ ժողովրդի ցեղասպանության մասին, այլ Ֆրանց Վերֆելի հանրահայտ «Մուսա լեռան քառասուն օրը» գրքից: Հետագայում Հոֆմանի հետ ծանոթանալով հարստացրել է գիտելիքները: Նրա հետ զրույցների ընթացքում վստահեցրել է, որ «Homo Politicus»-ը Թուրքիայում առաջին ֆիլմն է, որ ուղղակիորեն առնչվում է ցեղասպանության թեմայի հետ: «Հայերի մասին ուրիշ ֆիլմեր էլ նկարահանվել են, բայց այլ թեմաներով», նշել է նա, ավելացնելով, որ այդ բոլորը հնարավոր է եղել իրականացնել **Օսման Կավալայի** եւ նրա հիմնած «Անադոլու կուլտուր» մշակութային ասոցիացիայի շնորհիվ: Ֆիլմը ընտրված է եղել ցուցադրվելու Ստամբուլի կինոփառատոնում, բայց կառավարական շրջանակները չեն թույլատրել: Ֆիլմի ճակատագրի տհաճ պատմությունը ավարտվել է «կոշտ սկավառակի վրայից չմշակված տվյալների տարօրինակ անհետացումով»: Այլ երկրներում, ինչպես օրինակ՝ ԱՄՆ-ում, Կանադայում եւ եվրոպական մի քանի երկրներում H.P.-ն դրական արձագանքներով է ընդունվել եւ Ֆրանսիայում նույնիսկ դարձել է դոկտորական ատենախոսության թեմա:

Ներկայիս, Օրմանը, որ արդեն չորս տարի է, ինչ Շվեյցարիայում է ապաստանել, որպեսզի «կարողանա ազատ աշխատել», երկու նոր նախագծերի վրա է կենտրոնացրել իր ուշադրությունը: Առաջինը Սողոմոն Թեհլերյանի 1921 թվի բեռլինյան դատավարությունն է, իսկ երկրորդը՝ Յակոբ Կունցլերը, որին հաճախ Լեփսիուսի շվեյցարացի համազորն են համարում:

**«Արմինյն Միրոր-Սփեքթեյթըրից» համառոտ ներկայացրեց՝ ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ**

# Լիբանանի Ֆիլհարմոնիք նուագախումբը երէկ եւ այսօր

## *Ազգային հպարտանք եւ մշակութային սխրանք*

*Վերջին շրջանում արաբական որոշ երկրներում նկատելի է հետաքրքրության աճ դեպի սիմֆոնիկ երաժշտություն. նույնիսկ Արաբական Միացյալ Էմիրությունների տարբեր քաղաքներում՝ Դուբայ, Դոհա, Շարժա եւ այլք, վերջին տարիներին համերգներ են կազմակերպվում՝ ընդհանրապես օտար նվագախմբերի, այդ թվում՝ հայկական, հյուրընկալմամբ, ինչը արդիականության եւ մշակութային երանգներ է հաղորդում այդ երկրների առավելաբար նավթաառեւտրային պատկերին:*

*Այսուհանդերձ, հետաքրքրությունների աճը չի կարող տեւական լինել, եթե հիշյալ տարածաշրջանում, բացի Եգիպտոսից ու Լիբանանից, չկան ֆիլհարմոնիկ տեղական նվագախմբեր, երաժիշտներ աճեցնող կոնսերվատորիաներ: Իսկ Լիբանանի մայրաքաղաք Բեյրութում դրանք առկա են վաղուց, շնորհիվ նաեւ հայ երաժիշտների՝ տեղացի թե դրսից ներմուծված, մասնավորաբար Հայաստանից:*

*Վերջին շրջանում, այս առումով, նկատելի է նոր աշխուժություն. գրեթե ամենաշաբաթյա սիմֆոնիկ համերգներ մայրաքաղաքի եւ հարակից շրջանների քրիստոնյա, հայ թե արաբ, տաճարներում՝ երաժշտասերների խուռն ներկայությամբ:*

*Այս կապակցությամբ մեր ընթերցողներին ավելի լայն տեղեկություններ տալու համար խմբագրությունս դիմեց մեր գործընկեր, ՌԱԿ Լիբանանի «Զարթօնք» օրաթերթի պատասխանատու խմբագիր **Սեւակ Հակոբյանին**, որի հոդվածը՝ ստորեւ, որոշ կրճատումներով:*

«Ազգ»



### Պատմական ակնարկ

Լիբանանի Ազգային նուագախումբը հիմնուած է 1998 նոյեմբերին, Լիբանանի Ազգային բարձրագոյն երաժշտանոցի նախկին նախագահ դոկտ. **Ուալիտ Ղըլմիէյի** կողմէ: Նուագախումբի կարգավիճակը համալրուեցաւ 1999-ի ամրան, իսկ առաջին փորձերը սկսան 2000 յունուարին: 2009 հոկտեմբերին, Ուալիտ Ղըլմիէյի առաջարկով եւ Տնօրէններու խորհուրդի համաձայնութեամբ Լիբանանի Ազգային նուագախումբը վերանուանուելով սկսաւ կոչուիլ Լիբանանի Ֆիլհարմոնիք նուագախումբ:

Յետագային Երաժշտանոցի տնօրէն նշանակուած **Դոկտ. Ուալիտ Մուսալլէմ** ինքզինք պարտաւորուած կը զգայ շարունակելու եւ յառաջացնելու իր նախորդի՝ **Հաննա Էլ Ամիլի** աշխատանքը՝ վերարժեւորելով Լիբանանի Ֆիլհարմոնիք նուագախումբին (ԼՖՆ) նպատակը՝ տարածել դասական երաժշտութիւնը Լիբանանի մէջ, ոչ միայն մայրաքաղաք Պէյրութի, այլ նաեւ Լիբանանի բոլոր գլխաւոր քաղաքներուն մէջ: Մեծ կարեւորութիւն տրուած է ԼՖՆ-ի համերգներուն մէջ ներառել Լիբանանցի դասական երաժիշտներու նուագացանկը:

Իր հիմնադրութենէն ի վեր, ԼՖՆ-ն ելոյթ ունեցած է Լիբանանի բոլոր գլխաւոր փառատօներուն, ներառեալ Պաալպէքի, Պիպլոսի, Պէյթէտտինի, Զուք Միքայէլի, Ալ Պուսթանի փառատօները:

### ԼՖՆ-ը նախավերջին տարիներուն

Նախավերջին տարիներուն լիբանանահայ խմբավար՝ **Յարութ Ֆագլեանը** Լիբանանի Ֆիլհարմոնիք Նուագախումբի գլխաւոր ղեկավար նշանակուած էր: Այժմ Լուպնան Պաալպաքին մնայուն ղեկավար է, Ժորտի Մորան կանոնաւոր հիւր ղեկավար: ԼՖՆ-ն ղեկավարուած է նաեւ Ուալիտ Մուսալլէմի, Ֆուատ Ֆախուրիի, Միշէլ Խէյրալլահի, Կարօ Աւետիսեանի եւ Թաուֆիք Մաաթուքի , ինչպէս նաեւ՝ միջազգային բազմաթիւ հիւր ղեկավարներու կողմէ: Եղած են տարիներ, երբ ԼՖՆ-ն մէկ եղանակի ընթացքին աւելի քան 30 համերգ տուած է տարբեր առիթներով:

### Նուագախումբը՝ այսօր

ԼՖՆ այսօր կը շարունակէ պահպանել գործունէութեան կայուն մակարդակ մը, հակառակ՝ Լիբանանի դիմագրաւած տնտեսական եւ անվտանգային լուրջ մարտահրաւէրներուն, գլխաւորապէս որպէս մշակութային տոկունութեան ցուցանիշ, յուսահատութեան դէմ ըմբոստութիւն եւ դասական երաժշտութիւնը կենդանի պահելու նուիրում:

Գործունէութեան եւ հանդիսատեսներու վերջին շրջանի աճը պայմանաւորուած է առանցքային քանի մը գործօններով.

* **Մշակութային տոկունութիւն եւ «թիթանիքեան մտածելակերպ»**

Երաժիշտները շարունակած են ելոյթ ունենալ՝ չնայելով աշխատավարձերի արժոյթի արժեզրկման, 2020-ի օգոստոսին Պէյրութի պայթումին յաջորդող ժամանակաշրջանին եւ շարունակուող տնտեսական ճգնաժամին:

«Թիթանիք»ի երաժիշտներուն նման, համոյթը պնդած է նուագել՝ բնականոնութեան եւ հոգեբանական թեթեւութեան զգացում մը տալու համար բնակչութեան, որ կը դիմագրաւէ աղքատութեան եւ քաղաքական անկայունութեան հարուածները:

* **Գործօն առաջատարութիւն եւ արուեստագիտական տեսլական**

Ղեկավարութեամբ այնպիսի դէմքերու, ինչպիսիք են խմբավար Լուպնան Պաալպաքին եւ Երաժշտանոցի տնօրէն Դոկտ. Հիպա Ալ Քաուասը, նուագախումբը կեդրոնացած է համերգներ տալու վրայ՝ որպէս «միասնութեան եւ յոյսի ուղերձ» մը:

Նուագախումբը մեկնարկած է փառահեղ երաժշտական եղանակներ: Ան կը ներառէ միջազգային համագործակցութիւն, ինչպիսին է 2025-ի հոկտեմբերի եղանակի բացումը ուրուկուէյցի-լիբանանցի մաէստրօ Տիէկօ Նասէրի հետ, որ նշեց Լիբանան-Ուրուկուէյ դիւանագիտական կապերու 80-ամեակը:

* **Բազմազան ելոյթներ, համաշխարհային համագործակցութիւն եւ գործընկերութիւն**

ԼՖՆ-ն մնացած է միշտ գործօն՝ գործակցելով տեղական, տարածաշրջանային ու միջազգային կազմակերպութիւններու հետ, շարունակելով իր ելոյթները այնպիսի վայրերու մէջ, ինչպիսիք են Պաալպէքի Միջազգային փառատօնը, Ալ Պուսթանի փառատօնը եւ համագործակցութիւնը այնպիսի խումբերու հետ, ինչպիսին է Les Musicales de Baabdath-ը:

Լիբանանեան դրամանիշի արժեզրկման ընթացքին շատ օտարերկրացի երաժիշտներու հեռանալը փոխհատուցելու համար, ՆՖՆ-ը ամէն ինչ ըրած է չդադրեցնելու իր գործակցութիւնը միջազգային հիւր խմբավարներու եւ մենակատարներու հետ՝ պահպանելու համար իր չափանիշները:

* **Մատչելիութիւն**

Նուագախումբը կը պահպանէ իր ելոյթները անվճար կամ շատ մատչելի պահելու աւանդոյթը, որպէսզի դասական երաժշտութիւնը մնայ որպէս հանրային ծառայութիւն՝ ծայրահեղ տնտեսական դժուարութիւններու ժամանակ:

* **Վերակառուցում եւ երգացանկի պահպանում**

Հակառակ լիբանանեան տնտեսական ճգնաժամին պատճառով օտարերկրացի շատ երաժիշտներու կորուստին, նուագախումբը շարունակած է կատարել միջազգային դասական գործերու ընտրանի, շեշտը դնելով նաեւ լիբանանցի երգահաններու գործերուն վրայ:

* **Կեդրոնացում ազգային ինքնութեան վրայ**

Նուագախումբին վերջին երկացանկերը միշտ կ ընդգրկեն լիբանանցի երգահաններու գործերը՝ համաշխարհային դասականներու կողքին, նպատակ ունենալով պահպանել եւ խթանել Լիբանանի յատուկ երաժշտական ժառանգութիւնը ազգային դժուարութիւններու այս ժամանակաշրջանին:

* **Նուիրում կրթութեան**

Համոյթը կը շարունակէ օգտուիլ աւելի քան 5000 ուսանողներու առկայութենէն՝ ազգային երաժշտանոցին մէջ՝ ապահովելով կարեւոր բեմ երիտասարդ երաժիշտներու համար:

* **«Տոկունութեան ձայն»ը**

Նուագախումբին գործունէութիւնը նպատակային, յամառ ջանք մըն է՝ Լիբանանի մշակութային կեանքի արժեզրկման դէմ պայքարելու համար, որ յաճախ կը կատարուի «Տոկունութեան ձայն» ընդհանուր թեմայի տակ:

* **Հայկական մասնակցութիւնը**

Նուագախումբին (ԼՖՆ) մէջ հայկական ներկայութիւնը անոր ինքնութեան եւ վերջին գործունէութեանց հիմնաքարն է, որ նաեւ պայմանաւորուած է Լիբանանի մեծաթիւ եւ մշակոյթով աշխոյժ հայ համայնքի ներկայութեամբ:

* **Հայ ղեկավարներ ու երաժիշտներ**

Լիբանանահայ խմբավար Յարութ Ֆագլեանը տարիներ շարունակ եղած է ԼՖՆ-ի առանցքային դէմքերէն, յաճախ ղեկավարելով մեծ համերգներ՝ ապահովելով նաեւ հայկական երգահաններու ընդգրկումը նուագացանկին մէջ:

* **Նուագախումբին հայ անդամները**

Հայ երաժիշտները գրաւած են շարք մը առանցքային դիրքեր խումբին մէջ: Օրինակ՝ Աննա Կէօքճեանը հանդիսացած է վիոլայի բաժինի մենակատար եւ յաճախ ելոյթ ունեցած որպէս մենակատար:

Վերջին տարիներուն ԼՖՆ-ի հայ անդամները եղած են.

Առաջին ջութակ՝ Ռուզաննա Բանճարեան, Պորիս Միրզոյեան եւ Սերկէյ Տայեան:

Երկրորդ ջութակ՝ Եփրաքսիա Միքայէլեան, Տաթեւիկ Մկրտումեան, Արթուր Տէր-Յովհաննիսեան, Առաքել Միքայէլեան եւ Կարապետ Պասմաճեան:

Վիոլա՝ Աննա Կէօքճեան եւ Հայկ Տէր-Յովհաննիսեան (որոնք ներկայիս Հայաստանի Ազգային Ֆիլհարմոնիքին մենակատարներէն են) եւ Համբարձում Սիմոնեան:

Թաւջութակ՝ Անժելա Յունանեան, Աւետիս Կէօքճեան, Հայկ Պապայեան, Արէն Թէքեան եւ Շուշան Արթինեան:

Քոնթրապաս՝ Խաչատուր Սաւզեան:

* **Երիտասարդ շնորհալի երաժիշտներ**

Հայրենի կիթառահար Էտուարտ Տայեանը եւ ուրիշներ երկար ժամանակ հանդէս եկած են որպէս մենակատարներ՝ ցուցադրելով շարունակական կրթական կապը հայկական եւ լիբանանեան երաժշտական աւանդութիւններուն միջեւ:

* **ԼՖՆ-ի մէջ ներկայիս հանդէս եկող հայ երաժիշտներ**

Հայաստանէն՝
Ազատ Յարութիւնեան -շեփոր
Արթուր Թադեւոսով - գալարափող
Եւա Մարկոսեան- ջութակ
Սերկեյ Աբրահամեան - քլարինէթ
**Լիբանանէն՝**
Կարապետ Պասմաճեան - ջութակ
Ռուզաննա Բանջարեան - ջութակ
Արէն Թէքեան - թաւջութակ

Կ’արժէ նշել, որ հայորդիներուն թիւը մեծ է Լիբանանի Ազգային բարձրագոյն երաժշտանոցի ուսանողութեան մէջ:

* **Վերջին եւ սպասուող համագործակցական գործունէութիւններ (2025-2026)**

ԼՖՆ-ի վերջերս օգտագործած հայկական վայրերը եւ հայկական բովանդակութեամբ ծրագիրները:

⇨8

## Իմաստաբանական բառարան

### *Մուռ հանելու ավանդույթը*

«Մտրակահարել» բառի հիմքում սեմական լեզուներից (հավանաբար՝ արաբերենից) մեզ հասած *matreqa* բառն է՝ «խարազան» եւ «մահակ» նշանակությամբ, որի հետքերը մեզ տանում են դեպի արաբական աշխարհ, որտեղ բառը գործածվում է **matraq** ձեւով: Արաբները ժամանակին *matraq* կոչվող այս գործիքով բուրդ էին չփխում:

Հնում, երբ բուրդ ծեծելը նորաձեւ էր, ամուսինների կտտանքները մի կերպ հանդուրժող հալածյալ կանայք ուժերի ներածին չափ հուժկու հարվածներ էին հասցնում բրդին եւ դրանով մուռը հանում ծեծը դաստիարակչական միջոց համարող իրենց ամուսիններից: Չի բացառվում, որ մուռ հանելու այս ձեւը տարածված է եղել նաեւ հայերի մոտ:

Մտրակահարելու հետաքրքրական ավանդույթներից մեկն էլ տարածված է Արեւելյան Եվրոպայի որոշ երկրներում: Զատկին հաջորդող օրը տղամարդիկ վաղ առավոտյան ուռենու ճյուղերից եւ գունավոր ժապավեններից պատրաստված հատուկ մտրակներով իրենց կանանց կոնքերին նուրբ հարվածներ են հասցնում եւ հրճվում: Հավանաբար այդ կերպ տղամարդիկ իրենց կանանց կամայականությունների համար մուռ են հանում:

Սակայն մտրակահարելու ավանդույթը, իբրեւ մուռ հանելու միջոց, թերեւս մեզ է հասել անտիկ դարաշրջանից:

Պատմիչների փոխանցմամբ՝ Աքեմենյան Իրանի հինգերորդ տիրակալ **Քսերքսեսը**, իր բանակը Հունաստան հասցնելու նպատակով, հրամայում է 1,2 կիլոմետր երկարությամբ նեղուցի վրա կառուցել պոնտոնային կամուրջ: Սակայն նախքան բանակի տեղ հասնելը փոթորիկ է մոլեգնում եւ ավերում լողակամուրջը: Ծովի հանդգնությունից զայրացած Քսերքսեսը զինվորներին հրամայում է 300 անգամ մտրակահարել ծովի ջուրը:

Վստահ չեմ, բայց հայերեն «ջուր ծեծել» արտահայտությունը կարող է հենց այդ ավանդապատումից մեզ հասած լինել: Բայց չգիտես ինչու այդ պատմության ակունքներում գտնվող պարսիկները նույն միտքն արտահայտելու համար, «ծովի մեջ ջուր ծեծել» ասելու փոխարեն, ռուսների նման գործածում են «հավանգի մեջ ջուր ծեծել» դարձվածքը:

Արեւելքում պատժի ամենատարածված ձեւերից մեկը մտրակահարությունն է, որը կոչվում է «թաազիրային» կամ կարգապահական մտրակահարություն: Այդ նպատակով կիրառվող առարկան կաշվե ժապավեն է՝ մոտավորապես 100-120 սանտիմետր երկարությամբ եւ 1,5 սանտիմետր հաստությամբ՝ առանց հանգուցակապերի: Դատապարտյալին պառկեցնում են փորի վրա եւ հարվածները հասցնում մեջքին:

Եթե դատապարտյալը տղամարդ է եւ պատիժը պետք է կրի հանրային վայրում, ապա թույլատրվում է նրան մտրակահարել նստած դիրքում:

Կին դատապարտյալները մտրակահարվում են իգական սեռին պատկանող մտրակահարիչների կողմից, որի ընթացքում բացառվում է տղամարդկանց ներկայությունը:

Իսլամական քրեական օրենսգրքի 657-րդ հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք, ով ուրիշի ունեցվածքն է գողանում, դատապարտվում է վեց ամսից մինչեւ երկուսուկես տարի ազատազրկման եւ մինչեւ 74 անգամ մտրակահարության»:

Եկեք թույլ չտանք, որ մտրակահարելու ավանդույթը, թեկուզ մուռ հանելու նպատակով, մեր որոշ մշակութային գործիչների թեթեւ ձեռքով տարածում գտնի նաեւ Հայաստանում:

Գ.ԱՌԱՔԵԼՅԱՆ

# Երբ բացակայում են ներդրումային ծրագրերը

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

Մերօրյա հայաստանաբնակը, համենայն դեպս նրա որոշ թե որոշակի հատվածը, Աստծո յուրաքանչյուր օրը երկակի տրամադրությամբ է սկսում: Հանկարծ ու աշխատավայրում խնդիրներ չառաջանան, գները հերթական թռիչքը չցուցադրեն, վարձավճարների հարցում նոր անհեթեթություններ չարձանագրվեն, բարեփոխման հայտարարությունների անվան տակ հերթական սակագները չհաստատեն եւ այսպես շարունակ: Ում մտքով անցավ, ասենք, աղբավճարը սահմանել ոչ թե այն ստեղծողի, այլ բնակտարածության արդյունքում: Ասենք, մարդն ընտանյոք, ինքը կնոջ, ծնողների ու երեք փոքրիկների հետ բնակվում է փոքր բիզնեսի շնորհիվ կառուցած մոտ 200 քմ առանձնատանը: Այս պարագայում ամսվա աղբավճարը կազմում է 2600 դրամ, նախորդի դեպքում՝ 9 անձ անգամ 300 դրամ, 2700 դրամի դիմաց: Իսկ ահա հարազատներից մեկը, որն բնակվում է մոտակա 5 հարկանի շենքի 3 սենյականոց 80 քմ բնակարանում, վճարում է 1000 դրամ, նախորդ վճարահաշվարկի 2400 դրամի դիմաց: Թե որտեղ է նորարարություն հռչակվածի տրամաբանությունը, որեւէ մեկը տրամաբանված բացատրություն չունի: Այսպես էլ ապրում ենք:

Միայն ոչ՝ ՀՀ բարձրագույն իշխանական կառույցներում, առաջնահերթը՝ գործադիր մարմնում, որն է՝ ՀՀ կառավարությունում, որի ղեկավարը գրեթե յուրաքանչյուր առավոտ թվերի ու տոկոսների մի իսկական հեղեղ է հռչակում էլ բնակչության դրական հաշվեկշիռ ու ներդրումային հետաքրքրություն, էլ՝ ՀՀ կենտրոնական վիճակագրական ծառայության համաձայն գնաճի կանխում, էլ՝ արտահանման նոր հնարավորությունների բացահայտում ու ստեղծում, մի խոսքով՝ երկիր չենք... այլ դրախտավայր: Միայն չգիտես ինչու մեր մարդիկ չեն ոգեւորվում կիլոգրամի դիմաց մինչեւ 1000 դրամ կազմող երշիկեղենից, քանզի հարեւանությամբ ցուցադրվող հատվածում փափուկ մսի կգ-ի գինը մինչեւ 6000 դրամի է հասնում: Կաթ պարունակող մթերք պիտակով է առաջարկվում հիմնական կաթնամթերը, անգամ ակցիաներ է հայտարարվում, որոնք վերջնական արդյունքում յուրօրինակ աճպարարություններ են:

Գործադիրի ղեկավարը գրեթե չի անդրադառնում այնպիսի խնդիրների, ինչպիսիք են ՀՀ-ում ամուսնությունների ու ծնունդների նվազումը, երբ վերջիններս երբեմնի 70-80-հազարականների դիմաց հիմա հազիվ 30-հազարական է կազմում: Կան չէ՞ պետության կայացման ու զարգացման հանրահայտ ուղղություններ, որոնցից մեկը գյուղական բնակչության հնարավորինս նվազագույն թվի պահպանումն է: Մի պահ չխոսելով գերզարգացած երկրներից, բերենք մեր երբեմնի բախտակից մերձբալթյան երկրների օրինակը: Լատվիայի գյուղոլորտում ընդգրկված է աշխատունակ բնակչության 6 տոկոսը, Լիտվայում՝ 5 տոկոսը, իսկ Էստոնիայում՝ 2,5 տոկոսը, համախառն ներքին արդյունքի համապատասխանաբար 26,000, 33000 եւ 35000 դոլար ցուցանիշով: ՀՀ-ում գյուղական բնակչությունը 30 տոկոսից ավելին է, այն ավելացնելու քաղաքականություն է տարվում, երբ տասնյակ հազարավոր այսպես կոչված աշխատողների արածն ընդամենը ծառերից ու թփերից միրգ-հատապտուղներ հավաքելն է, մոռացության տալով աշխատատեղի հավելյալ արժեքի ստեղծման պահանջը: Արդյունքում ունենք մեկ բնակչի համեմատ 8-9 հազար դոլար, չերազելով անգամ մերձբալթյան երկրներին հասնելու մասին: Մեր համերկրացիների հիմնական մասը թերեւս տեղյակ էլ չէ այս թվերից ու տոկոսներից, այսուհանդերձ ինչ-ինչ միջոցներով ստացված տեղեկատվությունից զգում է, որ ՀՀ տնտեսությունում ինչ-որ բան իրոք այն չէ, որում մեզ փորձում են համոզել օրվա իշխանությունները:

Հենց այս օրերին հետաքրքրական զարգացումներ են ընթանում մեր հարեւան Թուրքիայում, հայ հանրությանը նույնպես մտահոգող կենսաթոշակային խնդրի հետ: Հարցն այն է, որ Թուրքիայի կառավարությունը ցանկանում է կենսաթոշակառուների ներկայիս 16 հազար լիրա կենսաթոշակը բարձրացնել 20 հազար լիրայի, դոլարի կուրսով ներկայիս մոտ 400 դոլարը հասցնել 475 դոլարի, ՀՀ դրամով 150000-ը դարձնել 180000: Առայժմ հեռու մնանք ինչ-ինչ գնահատականներ հնչեցնելուց, որոնք մեզ այլ տեղ կտանեն:

Այսօրինակ տրամադրությունների ազդեցության ներքո օրեր առաջ մի գրություն էի ուղղել ՀՀ վարչապետին, ընդգծելով, որ ներքոհիշյալն ընդամենը ի գիտություն եմ հայտնում, առանց որեւէ հետադարձ պատասխանի ակնկալիքի, քանզի ՀՀ տնտեսության լիարժեք կայացման համաշխարհային զարգացումները մեզանում ընդունված չեն անգամ մասամբ ընդունելի համարել: Ինչքան էլ ՀՀ տնտեսության թիվ 1 պատասխանատու գործադիրի ղեկավարը փորձի համոզել, որ յուրաքանչյուր օր քաղաքացիներից նամակներ է ստանում, դրանք ընթերցում է, համապատասխան ընթացք տալիս, տնտեսագիտական մտքի տասնյակ ու հարյուրավոր ներկայացուցիչներ այլ գնահատականներ են հնչեցնում: Ապացո՞ւյց եք ուզում, նայեք ու հետեւեք այն զարգացումներին ու գործընթացներին, որոնք ծավալվում են միլիոնավոր հայերի թող որ ժամանակավոր հանգրվան հռչակվող երկրներում: Հայաստանցիների որոշակի հատվածը գերադասում է իր ֆինանսական միջոցները ավանդի տեսքով ի պահ տալ մերձակա բանկերում կատակ բան չէ, բանկերի հաշիվներում 20 մլրդ դոլարը, որի 4 մլրդ դոլարն աճել է վերջին երեք տարիներին: Ինչո՞ւ... Այս մասին՝ առաջիկայում, եթե աշխատելու ցանկություն նշմարվի:

Ասենք՝ Ամեն:

# Լիբանանի Ֆիլհարմոնիք նուագախումբը երէկ եւ այսօր

⇨7

ԼՖՆ-ի ելոյթներէն շատերը 2024-ի վերջաւորութեան եւ 2025-ի ընթացքին, տեղի ունեցած են Հայ Աւետարանական Առաջին եկեղեցիին մէջ, Քանթարի, Պէյրութ

2024-ի յունուարին, լիբանանահայ խմբավար Կարօ Աւետիսեան Պէյրութի Հայ Կաթողիկէ Ս. Եղիա - Ս. Գրիգոր Լուսաւորիչ տաճարին մէջ ղեկավարեց ԼՖՆ-ն:

2025-ի դեկտեմբերին, ԼՖՆ-ն Հայ Աւետարանական Առաջին եկեղեցիին մէջ դարձեալ հանդէս եկաւ «Քրիստոսի ուրախութիւն եւ լոյս» համերգով:

* **Խաչմերուկային փոխանակում**

Լիբանանի Ֆիլհարմոնիք Նուագախումբի (ԼՖՆ) եւ Հայաստանի Ազգային Ֆիլհարմոնիք նուագախումբին (ՀԱՖՆ) միջեւ համագործակցութեան ամուր աւանդութիւն մը կայ: Պատմականօրէն, այս խումբերը փոխանակած են հիւր համերգներ եւ անցուցած են համատեղ յիշատակի համերգներ, ինչպէս օրինակ՝ Հայոց ցեղասպանութեան նուիրուածները:

* **Մշակութային նշանակութիւն**

Հայ երաժիշտներու մասնակցութիւնը կը դիտարկուի որպէս «պարտականութիւն»՝ պահպանելու բարձր դասական չափանիշները Լիբանանի մէջ: Խմբավարներ, ինչպէս Ֆազլեանը, ընդգծած են, որ հայ կոմպոզիտորներու (ինչպէս Արամ Խաչատրեանը) ներառումը անհրաժեշտ է նուագախումբի առաքելութեան՝ մշակոյթներու միջեւ կամուրջ հաստատելու: Թերեւս, լիբանանահայ արտադրիչներ, ինչպէս Սերուժ Պաղտասարեանը (C-rouge), կը շարունակեն նորարարութիւն կատարել՝ համադրելով սիմֆոնիք եւ հայկական ժողովրդական երաժշտութիւնները, յաճախ ներգրաւելով լիբանանեան զանազան խումբեր:

**Պատրաստեց՝ ՍԵՒԱԿ ՅԱԿՈԲԵԱՆ**
**«Զարթօնք» օրաթերթի պատասխանատու խմբագիր**

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԵ տարի
Հրատարակիչ
**«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ»**
**սոցիալ-մշակութային**
**հիմնադրամ**

Երեւան, Սայաթ-Նովա 21Ա,
Տարածք 48, Երեւան 0001
**e-mail:** info@azg.am
azgdaily@gmail.com
**www.azg.am**
*Գլխաւոր խմբագիր*
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
*Հաշվապահութիւն (գովազդ)*
հեռ. **010 582960**
*Համակարգչային շարուածքը՝*
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրված՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 12.02.2026, գինը՝ 200 դրամ, տպաքանակը՝ 800 օրինակ, տպագրում է «Գինդ» տպարան ՍՊԸ, ք. Երեւան, Բագրատունյաց 70ա: